


# ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՍՈՒԹՅՈՒՆ



## ԱՏՈՄ ԿԱՐԴԱՆՅԱՆ

*ՀՊՏՀ տնտեսագիտության  
տեսության ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու*

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

### ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ<sup>1</sup>

Զարգացման հետ մեկտեղ, ժամանակի ընթացքում, հենց զարգացման վերաբերյալ պատկերացումները նույնպես փոխվում են: Դա վերաբերում է նաև տնտեսական զարգացմանը, որն ընդհանուր զարգացման գործընթացի հիմնական բաղադրիչներից է: Զարգացման մասին ընկալումներն ունեն իրենց էվոլյուցիան, ըստ որում սա տարածվում է ոչ միայն զարգացման տեսաբանների ու փորձագետների, այլև երկրի կառավարման մարմինների, համապատասխան միջազգային կազմակերպությունների, քաղաքագետների, քաղաքական գործիչների, գործարարների, ինչպես նաև հանրության լայն շրջանակների վրա: Իհարկե, դա բոլորովին էլ չի նշանակում, թե նրանք միանման են մտածում զարգացման մասին, կամ որ նրանց ընկալումները փոխվում են համաժամանակյա ձևով, նույն ուղղությամբ և խորությամբ: Ձևավորված շահերի, համոզմունքների և կարծրատիպերի պատճառով զարգացման վերաբերյալ նոր գաղափարները, որպես կանոն, դժվարությամբ են հարթում իրագործման ճանապարհը:

Այստեղ կքննարկվի զարգացման վերաբերյալ տնտեսագիտական մեկնաբանությունների էվոլյուցիան, որի շնորհիվ սելեկցիայի են ենթարկվում գիտական հետազոտություններով հիմնավորված ու գործնականում փորձով հաստատված հայեցակարգերը: Տվյալ հարցադրումն առանձնապես արդիական է այն իմաստով, որ ամեն մի տնտեսական ռազմավարության, քաղաքականության կամ դրանց վերափոխումների հիմքում ընկած են նաև զարգացման վերաբերյալ այս կամ այն պատկերացումները: Դրանց ճշտությամբ, արդիականությամբ և խորությամբ մեծապես պայմանավորված է զարգաց-

<sup>1</sup> Հոդվածը պատրաստվել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Տնտեսական զարգացում» թեմայի կատարման շրջանակներում:

ման քաղաքականությունների հաջողությունը: Հակառակ դեպքում անխուսափելի է տապալումը: Համաշխարհային մրցակցության ջանքերի եզրափակիչ օբյեկտը, վերջին հաշվով, զարգացման մակարդակը, որակը և տեմպերն են:

Ասվածից ելնելով՝ այս հոդվածում կարևորվել են զարգացման հետևյալ տեսանկյունները՝ տնտեսական զարգացման էության և ընդհանուր ըմբռնման հիմնական տեսակետները, պատասխանատու զարգացման մարտահրավերը, ընդգծելով պետության դերը դրա դիմագրավման մեջ, մեթոդաբանական մոտեցումները զարգացման ուսումնասիրություններում, տնտեսական զարգացման բնութագրերը և ուղղությունները, մարդկային զարգացման հայեցակարգային մոտեցումները և դրույթները:

### ***Տնտեսական զարգացման էությունը և ընդհանուր ըմբռնումը***

Ջարգացման ուսումնասիրություններն ինտենսիվորեն ծավալվել են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, դրանց հրատապությունը մեծացել ու կարևորվել է: Այս ուղղության գիտական արդյունքները գնահատվել են Նոբելյան մի շարք մրցանակներով: Դրանցից 1979 թ. մրցանակը, որ ստացան Արթուր Լյուիսը և Թեոդոր Շուլցը, ուղղակիորեն վերաբերում էր զարգացող երկրների տնտեսական հիմնախնդիրների հետազոտություններին: Սակայն թե՛ դրանից առաջ, թե՛ հետագայում եղել են զարգացման հիմնախնդիրներին սերտորեն առնչվող մրցանակներ<sup>2</sup>:

Մյուրդալը նշում է, որ ինքը, իբրև ինստիտուցիոնալ տնտեսագետ, պարտադրված է եղել զարգացումն ըմբռնել որպես քաղաքական, սոցիալական և տնտեսական ամբողջ համակարգի տեղաշարժ, փորձել է հիմնախնդիրները քննարկել և լուծել համաշխարհային միջավայրի տիրույթում, ինչպես նաև արտահայտել է դատողություններ մարդկային կենսավիճակների շատ լայն շրջանակի վերաբերյալ<sup>3</sup>: Այս հիմնադրույթն արժեքավոր ու հրատապ է ընդհանրապես, քանի որ զարգացումը միշտ էլ համալիր բնույթ ունեցող բազմաշերտ գործընթաց է, իսկ տնտեսական զարգացումն անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ միայն տնտեսական, այլև արտատնտեսական տարաբնույթ միջավայրերի ու գործոնների հետ փոխազդեցության տիրույթում: Բացի այդ, ցավոք, դեռևս չարունակում է տեղին լինել զարգացած երկրներին վերաբերող Մյուրդալի սկզբունքային քննադատությունը՝ դրանց կողմից թերզարգացած երկրների կամ հետամնաց տարածաշրջանների հանդեպ ցուցաբերվող օպորտունիստական անտարբերության և կոնֆորմիզմի համար<sup>4</sup>:

Շուլցը նշանակալից ներդրում է կատարել մարդկային կապիտալի տեսության մշակման և զարգացման համատեքստում դրա որոշիչ դերի հիմնավորման մեջ: Ելնելով այն հանգամանքից, որ հողը և մյուս իրային գործոն-

<sup>2</sup> Այսպես՝ 1974 թ. երկու մրցանակակիրներից Գ. Մյուրդալը, թե՛ գործնականորեն, թե՛ հիմնարար հետազոտություններով, տարիներ է նվիրել զարգացող երկրների հիմնախնդիրների լուծմանը: Այդ մրցանակի շնորհման հիմքերից մեկը տնտեսական, սոցիալական և ինստիտուցիոնալ գործընթացների փոխազդեցության ուսումնասիրությունն էր: 1993 թ. մրցանակին արժանացան Դ. Նորթը և Ռ. Ֆոգելը՝ տնտեսության պատմության բնագավառում նոր ուղղության ստեղծման համար: 1998 թ. մրցանակակիր դարձավ Ա. Սենը՝ բարեկեցության տնտեսագիտության հիմնախնդիրների ուսումնասիրության մեջ ավանդի համար: Այս հեղինակների գիտական մշակումներին բնորոշ ընդհանրություն կարող է համարվել զարգացման տարբեր տեսանկյունների կարևորումը, դրանց շաղկապումը:

<sup>3</sup> Տե՛ս Gunnar Myrdal, Prize Lecture: The Equality Issue in World Development. Nobelprize.org. Nobel Media AB 2013. Web. 19 Aug 2013. [http://www.nobelprize.org/nobel\\_prizes/economic-sciences/laureates/1974/myrdal-lecture.html](http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1974/myrdal-lecture.html)

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը:

ները գերազնահատված են, իսկ մարդկային սուբյեկտների որակը՝ թերազնահատված, նա եզրակացրել է. «...ներդրումը բնակչության որակի բարելավման մեջ կարող է էապես նպաստել աղքատ մարդկանց տնտեսական հեռանկարներին և բարեկեցությանը»<sup>5</sup>: Ինքնին խոսում է նաև Շուլցի ընդհանրացված ամփոփումը. իր նոբելյան դասախոսության կենտրոնական հենք նա համարել է բնակչության որակի և գիտելիքների կարևորումը<sup>6</sup>: Հետագայում այս գաղափարներն ամուր հիմք դարձան մարդկային զարգացման հայեցակարգի ու դրա բարեհաջող կիրառումների համար: Տվյալ դիտակետից էական է, որ, մի կողմից՝ պատշաճ բնութագրվում է մարդկային ռեսուրսների՝ որպես տնտեսական զարգացման միջոցի դերը, մյուս կողմից՝ զարգացման վերջնանպատակները նույնպես իմաստավորվում են հանրության ընդհանուր կենսապահովման ու բարեկեցության բարձրացման շնորհիվ:

Ավելի քան երկու տասնամյակ առաջ զարգացման վերաբերյալ այս մտայնությունն արտացոլվեց նաև համաշխարհային բանկի պաշտոնական դիրքորոշման մեջ: Դրա համաձայն՝ «Ջարգացման մարտահրավերը կյանքի որակը բարելավելն է: Հատկապես աշխարհի աղքատ երկրներում կյանքի ավելի լավ որակն ընդհանրապես պահանջում է ավելի բարձր եկամուտներ, սակայն ներառում է անհամեմատ ավելին: Որպես ինքնին նպատակներ՝ այն ընդգրկում է ավելի լավ կրթությունը, առողջության և սննդառության ավելի բարձր չափորոշիչները, ավելի պակաս աղքատությունը, ավելի մաքուր բնամիջավայրը, հավասար հնարավորությունները, ավելի մեծ անհատական ազատությունը և ավելի հարուստ մշակութային կյանքը»<sup>7</sup>: Այստեղ, առնվազն անվանապես, շեշտադրվել են տնտեսական զարգացման սոցիալական ու գոյաբանական հանգուցային ուղենիշները:

Այդ առումով, տիպական է նաև Մայքլ Թոդարոյի բնորոշումը, որում նա համադրում է զարգացման վերաբերյալ խորքային ընկալումները և տեսանկյունները: Նա զարգացումը սահմանում է որպես բոլոր մարդկանց կյանքի բարելավման գործընթաց: Այնուհետև Թոդարոն զարգացման հավասարապես կարևոր տեսանկյուններ է համարում մարդկանց կենսամակարդակի բարձրացումը, նրանց ինքնահարգանքի աճին նպաստող պայմանների ստեղծումը սոցիալական, քաղաքական և տնտեսական այնպիսի համակարգերի ու ինստիտուտների հաստատմամբ, որոնք մեծ տեղ են տալիս մարդկային արժանապատվությանը և հարգանքին, ինչպես նաև մարդկանց ազատության մեծացումը՝ նրանց ընտրության փոփոխականների շրջանակի ընդլայնմամբ, մասնավորապես՝ սպառողական ապրանքների և ծառայությունների բազմազանության աճով<sup>8</sup>:

Այսպիսով՝ տնտեսական զարգացումը դինամիկ առաջընթաց է, որի շնորհիվ տեղի են ունենում երկրի ողջ բնակչության ինքնուրույն կենսապահովման կարողությունների մեծացում դրանց ընդլայնման, նորացման և բազմազանեցման ճանապարհով, դրա հիման վրա՝ կենսապայմանների և ապրելակերպի ընդհանուր բարելավումներ, ինչպես նաև ստեղծվում են մարդկա-

<sup>5</sup> **Theodore W.**, Schultz-Prize Lecture: The Economics of Being Poor. Nobelprize.org. Nobel Media AB 2013. Web. 19 Aug 2013. [http://www.nobelprize.org/nobel\\_prizes/economic-sciences/laureates/1979/schultz-lecture.html](http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1979/schultz-lecture.html)

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>7</sup> World Bank, World Development Report, 1991 (New York: Oxford University Press, 1991), p. 4.

<sup>8</sup> Տե՛ս **Todaro M.**, Economic Development. Addison-Wesley Publishing Company, 1996, 6<sup>th</sup> ed., էջ 685:

յին ներուժի լիարժեք իրացման նպաստավոր նախադրյալներ: Ջարգացումը պահանջում է քաղաքակրթական իդեալի մշակում, դրան տանող ռազմավարության ընտրություն, համապատասխան ռեսուրսներ, ջանքեր և ներդրումներ ապագայի մեջ: Ներկայումս ավելի զարգացած են այն երկրները, որոնք նախկինում ավելի շատ և/կամ արդյունավետ ներդրումներ են կատարել: Այս օրինաչափությունն ունիվերսալ է. վաղն ավելի զարգացած կլիմեն նրանք, ովքեր այսօր կատարում են անհրաժեշտ ներդրումներ զարգացման նախագծերում:

Իհարկե, զարգացումն իրականում առաջընթաց է ոչ բոլոր առումներով, քանի որ դրան ուղեկցում են նաև բացասական երևույթներ: Ինչպես նշում է Յանոշ Կորնաին՝ «Մենք պետք է գիտակցենք, որ «առաջընթաց» բառը միշտ հնչում է դրական իմաստով, ունի արժեքային նշանակություն»: Այնուհետև ընդունելով, որ տեխնիկական առաջընթացի նվաճումները կարող են նաև չարաշահվել, նա եզրակացնում է, որ տեխնիկական փոփոխությունների ուղղվածությունը հաճախ անվանում են առաջընթաց, քանի որ դրանում անհամեմատ ավելի շատ են արժանիքները, առավելությունները, քան թերությունները<sup>9</sup>: Կարևոր է ոչ միայն զարգացման արդյունքների ու բացասական հետևանքների միջև ցանկալի զուտ հաշվեկշռի ապահովումը և պահպանումը, այլև կողմնակի թերությունների հնարավորին չափ նվազեցումը և կանխարգելումը: Այդ հարցում առավել ներուժ ունեն ճիշտ և գործող արժեքային կողմնորոշումները:

Հասարակության կյանքն ունի որոշակի էվոլյուցիոն ընթացք: Ջարգացումն այդ էվոլյուցիան ուղղորդելու, կազմակերպելու, այսինքն՝ գիտակցված ու կամային միջամտություն կատարելու գործընթաց է: Դրա իրականացման ճիշտ տարբերակը զարգացման ընդհանուր ռազմավարության մշակումն է: Ըստ էության, խոսքը ցանկալի հասարակության ու տնտեսության բնութագրերի հստակեցման և դրանց հասնելու ուղիների մասին է: Դա ոչ թե հեռավոր ապագայի մտացածին մոդել է, այլ ներկա ընթացքների կարգավորման միջոց: Հետևաբար՝ ռազմավարական հայեցակարգային մոտեցումները գործնականում կատարում են ուղեցույցի շատ կարևոր դեր: Նախևառաջ, զարգացման ռազմավարության առկայությունը թույլ է տալիս խուսափել մարտավարական խարխափումներից, իրավիճակային կիսատ լուծումներից, որոնք անխուսափելի են հակառակ պարագայում և խորացնում են եղած հիմնախնդիրները, առաջացնում նորերը, բարդացնում դրանց լուծումը: Այնուհետև՝ զարգացման ռազմավարության հետ մարտավարական ընթացքի համադրման շնորհիվ բացահայտվում են շեղումները, ակնառու է դառնում դրանց բնույթը և չափը: Այս եղանակով հնարավոր է ժամանակին պարզել շեղումների պատճառները, դրանցով պայմանավորված խոչընդոտները, մշակել ու գործադրել վերջիններիս հաղթահարման համար անհրաժեշտ միջոցառումներ:

Ջարգացման ռազմավարության հիմքերի ամրությունը պայմանավորված է այն արժեքների համակարգով, որ տվյալ հանրությունը ձգտում է հաստատել: Հետևաբար՝ արժեքներն ունեն վճռորոշ նշանակություն: Համենայնդեպս, փաստացի ընթացքները անուղղակիորեն ցույց են տալիս վարվող քաղաքականության իրական շարժառիթները: Վերը նշված ուղեցույցի դերը

<sup>9</sup> Տե՛ս **Корнаи Я.**, Инновации и динамизм: взаимосвязь систем и технического прогресса. „Вопросы экономики“, 2012, N4, էջ 18:

լիարժեք կարող են խաղալ ճշմարիտ ու մնայուն կենսական արժեքները: Հակառակ ուղղվածությամբ արժեքները բացառում են կայուն, ընդգրկուն ու տևական զարգացման հնարավորությունը: Վերջին հաշվով, տիրող արժեհամակարգով է որոշվում այն հարցի պատասխանը, թե զարգացման ինչ փուլում է գտնվում տվյալ հանրությունը: Դա նաև նշանակում է, որ զարգացման փուլերի հաջորդափոխության հիմքում ընկած են արժեհամակարգային անհրաժեշտ փոփոխությունները՝ նախկին մոլորությունների գիտակցում և հաղթահարում, վերանայումներ, վերափմաստավորումներ, գերակայության փոխարինումներ և այլն:

Տնտեսական զարգացումն առողջ առաջընթաց է, եթե այս կամ այն կերպով ու չափով վերաբերում է հանրության յուրաքանչյուր անդամի: Այդ տեսակետից կարևոր է անդրադառնալ դուալիզմի երևույթին, որը համատարած է ինչպես առանձին երկրներում, այնպես էլ, ավելի խորությամբ, գլոբալ տիրույթում: Հակիրճ բնութագրմամբ՝ դուալիզմը հակասական իրողությունների գոյակցությունն է, ինչպես օրինակ՝ պերճանքի և թշվառության համաժամանակյա առկայությունը<sup>10</sup>: Ջարգացման արդյունքներից մեկն այն է, որ աստիճանաբար կրճատվեն նման հակադրությունները: Մինչդեռ, հաճախ դրանք ոչ միայն չեն հաղթահարվում, այլև ծավալվում ու խորանում են, ինչն անհամատեղելի է զարգացման հետ: Հետևաբար՝ զարգացման հանգուցային ընկալումներից մեկը պետք է կապել դուալիստական դրսևորումների արժեքական և չափավորման հետ:

Դուալիզմի ընդլայնումը նշանակում է, որ զարգացումն ինչ-որ պահից ընթացել է ճիշտ մայրուղուց շեղումով: Իսկապես, եթե հասարակության գերակշիռ մասի տնտեսական դրությունը տևական ժամանակ չի բարելավվում, լավագույն դեպքում մնում է նույնը, իսկ երբեմն էլ՝ վատթարանում, մինչդեռ փոքր մասի բաժինն անընդհատ մեծանում է, դիրքերն՝ ամրանում, ապա որևէ հիմնավորմամբ դժվար է սա զարգացում համարել: Հակառակ դեպքում կհետևի, որ զարգացման դրսևորում է նաև հանրության արտոնյալ շրջանակում նյութական կարողությունների գերկուտակումը՝ մեծամասնության գոյատևման պայմաններում, ինչն անընդունելի է: Դուալիզմի խստացումից հետևում է, որ զարգացումը ծառայում է հանրության ազդեցիկ վերնախավերին՝ շրջանցելով մյուսներին և նրանց թողնելով հետամնացության կամ թերզարգացածության, սոցիալական մեկուսացման և խորթացման վիճակում: Հետևաբար՝ միշտ արդիական է զարգացման մեջ մարդկանց մասնակցային ընդհանրական ներգրավման ապահովումը, այսինքն՝ դրա սոցիալական ընդգրկման տիրույթի ընդլայնումը:

Անկախ դուալիզմից, զարգացման հատկանիշներից մեկը անհամաչափությունն է: Դա դրսևորվում է ինչպես ըստ առանձին երկրի ընթացիկ վիճակի և էվոլյուցիայի դինամիկայում, այնպես էլ տարբեր երկրների կամ դրանց խմբերի համեմատական փոխհարաբերության մեջ: Այդ տեսանկյունից դժվար թե զարգացումը երբևիցե լինի համաչափ: Սակայն անհամաչափության աստիճանը կարող է հիմնախնդիր լինել: Այսպես՝ զարգացման «պտուղները» համաչափ չեն բաշխվում և չեն կարող համաչափ բաշխվել:

<sup>10</sup> Գրականության մեջ նշվող դուալիզմի դրսևորումները բավականին շատ են ինչպես երկրի ներսում, այնպես էլ համաշխարհային տիրույթում: Դրանցից հիմնականում տիպական են տնտեսության ավանդական և արդիական հատվածների, հետամնաց և զարգացած երկրների, ծայրամասերի ու կենտրոնի գոյակցությունը, ինչպես նաև բևեռացման դրսևորումները եկամուտների, հարստության, սոցիալական կարգավիճակի առումով և այլն:

Դրա հետ մեկտեղ, զարգացման ներքին տրամաբանությունը ենթադրում է՝ թեկուզև տարբերակված համապատասխան չափերով, զարգացման «պտուղները» պետք է հասանելի դառնան բոլորին: Հետևաբար՝ տնտեսական զարգացման հիմքերից, ուղիներից և վերջնական արդյունքներից մեկը օբյեկտիվորեն պայմանավորված է հանրային կյանքի տարբեր բնագավառներում արդարության հաստատմամբ:

Ջարգացման անհամաչափության առանձնահատկությունն այն է, որ ըստ երկրների դիտարկելու պարագայում կարող են բացահայտվել ու նկարագրվել զարգացման ձեռքբերումները կամ ձախողումները, որոնք ինքնին նույնպես անհամաչափ են: Այսպես՝ եթե երկիրը մյուսների համեմատությամբ առաջանցիկ տեմպերով դինամիկ զարգանում է, ապա կրճատվում է դրանց միջև խզվածքը՝ մոտեցնելով զարգացման մակարդակները: Որպես կանոն, այդպես տեղի է ունենում «հասնող» կամ «հետապնդող» զարգացման քաղաքականության հաջող իրականացման դեպքում, երբ երկիրը նաև կարողանում է իրացնել «ուշ եկածների» առավելությունը: Իսկ եթե երկիրը զարգանում է չափազանց դանդաղ կամ ձախողում է զարգացման նախագծերը, ապա դրա հետևանքով մեծանում են գոյություն ունեցող խզվածքը, անհամաչափության և հետամնացության աստիճանը:

#### ***Պետությունը և պատասխանատու զարգացման մարտահրավերը***

Պատասխանատու զարգացման՝ որպես մարտահրավերի ընկալումը վերաբերում է սուբյեկտային բոլոր մակարդակներին՝ անհատականից մինչև համաշխարհային: Այստեղ այն հիմնականում դիտարկենք պետության մասշտաբով, քանի որ երկրի զարգացման ձեռքբերումների կամ ձախողումների մեջ պետության, համապատասխանաբար՝ դրական ու բացասական դերը հանգուցային է: Դա պայմանավորված է պետության առաջատար մասնակցությամբ զարգացման գործընթացների կազմակերպման և պայմանների ստեղծման, ռազմավարության և քաղաքականությունների մշակման, ուղղորդման և իրագործման մեջ: Ասվածից հետևում է, որ պետության այս կամ այն ազդեցությունը զարգացման բնութագրերի վրա կանխորոշող է:

Նորանկախ երկրի համար, առաջին հերթին, զարգացման հիմնարար նախադրյալ և մայրուղի է հենց պետական ինստիտուտների ձևավորումը և հաստատումը՝ պետական շինարարությունը, ինքնիշխանության և անվտանգության ամրապնդումը, սահմանադրական իրավական պետության կայացումը: Դրանց միջոցով են ստեղծվում ու գործում պետական, ազգային և հանրային էական շահերի իրացման մեխանիզմները, ինչպես նաև տնտեսական զարգացման քաղաքական ու իրավական ամուր հիմքերը: Մյուս կողմից՝ այդ խնդրի լուծումը բարդանում է, քանի որ ժամանակակից արդյունավետ պետության նյութական հիմքերն էլ պայմանավորված են տնտեսական զարգացմամբ: Փակ, առավել ևս արատավոր շրջանում չհայտնվելու համար մնում է նշված երկու հիմնական զարգացումների համակցման տարբերակը՝ թեկուզ աստիճանական, փուլային կամ քայլ առ քայլ եղանակով, սակայն հետևողականորեն:

Այդ առումով տեսագործական կարևոր նշանակություն ունի Դուգլաս Նորթի մոտեցումը: Նա նախ նշում է, որ հաջող զարգացման քաղաքականությունը ներառում է տնտեսական փոփոխության դինամիկայի ընկալումը, իսկ պետական կառուցվածքների վերլուծությունը համարում է տնտեսական

փոփոխության դինամիկ մոդելի էական մաս, քանի որ դրանք են սահմանում և պարտադրում ֆորմալ կանոնները: Այնուհետև Նորթը փաստում է այդպիսի մոդել ունենալուց դեռևս որոշ հեռավորությունը, սակայն հավելում, որ նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտության մեջ մշակվող կառուցվածքը թեև ավարտուն չէ, այնուամենայնիվ, առաջարկում է արմատապես տարբեր զարգացման քաղաքականություններ, քան ավանդական զարգացման տնտեսագետները և օրթոդոքս նորդասական տնտեսագետները: Նրա կարծիքով՝ զարգացման տնտեսագետները տիպականորեն պետությունը մեկնաբանել են որպես կամ էկզոգեն, կամ բարերար սուբյեկտ զարգացման գործընթացում: Նորդասական տնտեսագետները լռելյայն ենթադրել են, որ ինստիտուտները (տնտեսական, ինչպես նաև քաղաքական) նշանակություն չունեն, և որ ալոկատիվ արդյունավետության մոդելներում մարմնավորված ստատիկ վերլուծությունը ուղեցույց պիտի լինի քաղաքականության համար, այսինքն՝ «հասնելու ճիշտ գներին»՝ վերացնելով փոխանակության և գնային վերահսկողությունները: Նորթն իր եզրակացությունը ձևակերպում է հետևյալ հիմնադրույթով. «Իրականում, պետությունը երբեք չի կարող մեկնաբանվել որպես էկզոգեն սուբյեկտ զարգացման քաղաքականության մեջ, և ճիշտ գներին հասնելը ցանկալի հետևանքներ է ունենում միայն երբ դուք արդեն տեղում ունեք սեփականության իրավունքների և դրանց կենսագործումը պարտադրելու համալիր, որոնք այնուհետև կստեղծեն մրցակցային շուկայի պայմաններ»<sup>11</sup>: Այսպիսով՝ պետությունը, որպես զարգացման ակտիվ մասնակից, անփոխարինելի սուբյեկտ է: Եթե պետությունը չի ստանձնում այդ հիմնարար գործառույթը կամ դա կատարում է ոչ պատշաճ կերպով, ապա զարգացման եղած ներուժը լիարժեք չի բացահայտվում ու հանրօգուտ իրացվում, տրվում է տարերային ու բարձիթողի ընթացքի: Այս դեպքում անխուսափելի է պատասխանատու զարգացման փոխարինումը ընդհանրական անպատասխանատվության, տնտեսական սուբյեկտների կամայական ինքնագործունեության և փոխհարաբերությունների կարգավորման ոչ ֆորմալ կանոնների ու նորմերի տիրապետման մթնոլորտով: Բազմամյա փորձը հաստատում է, որ այդպիսի մթնոլորտում ոչ միայն անհնարին է կայուն զարգացումը, այլև առաջանում են զարգացման տարաբնույթ խոչընդոտներ՝ վերածվելով արգելակման մեխանիզմի: Վերջինիս գործողության հետևանքներից են հետամնացության խորացումը, թերզարգացածության կոնսերվացումը, ընդհանուր դեգրադացիան, բևեռացումը և այլն:

Իսկ եթե պետությունը ստանձնում է նշված գործառույթը և հետևողականորեն իրականացնում, ապա ամուր հիմք է դրվում պատասխանատու զարգացման համար: Այս իրողության նշանակությունը չի սահմանափակվում պետական հատվածով, քանի որ այդ գործնական դիրքորոշումը հարուցում է դրական էֆեկտներ և սփռում զարգացման գործընթացին մասնակից սուբյեկտների ողջ շրջանակի վրա: Երկրի տնտեսական զարգացման գործում իր բաժին պատասխանատվության կրումով պետությունը նաև արտահայտում է թափանցիկ գործունեության և հանրությանը հաշվետու լինելու պատրաստակամություն: Թեև դրանք ինքնին չեն կարող փոխարինել զարգացման համատարած արդյունքներին, այդուհանդերձ, էական են այնպիսի միջավայրի ձևավորման համար, որը նպաստում է նման արդյունքների ձեռքբերմանը: Այդ առումով, արդիական է զարգացման քաղաքականությունների կերպա-

<sup>11</sup> North D., The New Institutional Economics and Development, p. 5. [www.deu.edu.tr](http://www.deu.edu.tr)

փոխումը՝ հաշվետու լինելը և թափանցիկությունը դրանցում ներառելու համար: Դա շաղկապված է նաև համաշխարհային զարգացմանը վերաբերող հիմնահարցերի հետ, քանի որ զարգացած երկրները և միջազգային կազմակերպությունները վճռորոշ դեր ունեն պատասխանատու զարգացմանը նպաստելու գործում:

Հիմնախնդիրները մնում են չլուծված, իսկ նոր մարտահրավերներն առաջանում են նաև անցյալում անպատասխանատու գործողություններից կամ անգործությունից: Չդիմագրավված մարտահրավերների՝ ապագայում վերադարձից խուսափելու լավագույն ուղին դրանց պատասխանատու ձևով դիմագրավելն է ներկայում: Ցավոք, առայժմ չի բացառվել անպատասխանատվությունը որոշումների ընդունման, ռեսուրսների ուղղորդման և զարգացմանն առնչվող այլ գործունեությունների մեջ:

Հաշվետու լինելու կարևորությունը չնսեմացնելու և դրա ձևական բնույթից խուսափելու միջոցը համարժեք պատասխանատվության մեխանիզմն է՝ զարգացման նպատակների իրագործումը ձախողելու համար՝ սահմանելով և անխտիր կիրառելով դրա քաղաքական, իրավական, բարոյական մոտեցումները և չափանիշները: Նպատակահարմար է զարգացման այնպիսի ռազմավարության ընտրությունը, որը հիմնված է անհատական և սոցիալական արժեքների վրա և ապահովում է փոխհամաձայնություն տվյալ հանրության մեջ: Զարգացման ռազմավարության իրականացման անհրաժեշտ նախադրյալը երկրի վերնախավի կողմից զարգացման պահանջմունքի ամբողջական գիտակցումն է, ինչպես նաև զարգացման ներուժի ու պայմանների նպատակասլաց ձևավորումը, դրա համար պահանջվող դիրքորոշումները և քաղաքական կամքի հետևողական գործադրումը: Հաշվետու լինելու և թափանցիկության առավել նախընտրելի տիպերը շաղկապված են զարգացման առաջադիմական վերջնարդյունքների հետ, որոնք ակնառու և օգտավետ են բոլորի համար: Նույնը ճշմարիտ է զարգացումը խոչընդոտող գործոնների և իրավիճակների հաղթահարման կամ նվազեցման առումով:

Պատասխանատու զարգացման թելադրանքով է նաև, որ անցած տասնամյակների ընթացքում զարգացման հայեցակարգային ըմբռնումը խորացել և ընդլայնվել է: Դա արտացոլվում է զարգացման՝ որպես տնտեսական աճի զուտ տնտեսական մեկնաբանությունից նշանակալից տեղաշարժով դեպի դրա ավելի լայն իմաստավորումը, ներառյալ բազմաշերտ՝ սոցիալական, քաղաքական, ինստիտուցիոնալ, մշակութային, հոգեբանական, վարքագծային և մյուս չափումները<sup>12</sup>: Զարգացման տնտեսագիտության մեջ մշակվել ու հաստատվել են զարգացման այնպիսի հիմնարար հայեցակարգեր, ինչպիսիք են՝ հնարավորությունների ընդլայնումը, բևեռային անհավասարությունների չափավորումը, մարդկային ներուժի ձևավորումը, կատարելագործումը և իրացումը, ազատությունը, բարեկեցությունը: Չնայած տեսական այս արդյունքներին, գործնականում հետամնացությունը, թերզարգացածությունը և զարգացումը գոյակցում են աշխարհում: Այս իմաստով, զարգացումը պետք

<sup>12</sup> Ամեն տնտեսական աճ չի կարող բացառապես նշանակել զարգացում: Մյուս կողմից՝ անընդունելի է զարգացման հանգեցումը սոսկ տնտեսական աճին: Համեմայնդեպս, որակյալ տնտեսական աճը համատեղելի է զարգացման հետ և շարունակում է մնալ դրա հնարավոր ձևերից մեկը: Այստեղ տնտեսական աճի ու զարգացման փոխհարաբերությունն առանձին չի քննարկվի: Դրան, ինչպես նաև շաղկապված հիմնահարցերին ավելի հանգամանորեն անդրադարձել ենք «Տնտեսական աճի որակական բնութագրերը զարգացման համատեքստում» հոդվածում /«Բանբեր ՀՊՏՀ», 2013 (3), էջ 7-24/:



է գնահատվի նաև որպես հետամնացության հաղթահարում և թերզարգացածության կրճատում: Հարուստ և աղքատ երկրների միջև մեծացող ձեռք-վածքը չի կարող համատեղելի լինել զարգացման ներքին իմաստի հետ: Հետևաբար՝ մեծապես անհավասար վիճակների տարբերության կրճատումը համաշխարհային զարգացման առաջնահերթություններից մեկն է: Դա պահանջում է թույլ զարգացած երկրներում սոցիալ-տնտեսական վատթար իրավիճակի անհապաղ բարելավում:

Հարուստ և աղքատ երկրների միջև խզման ընդլայնումն արգելակում է զլոբալ զարգացումը: Աշխարհում այն ստեղծում է չափազանց անհավասարակշիռ իրավիճակ, ինչը կայուն զարգացման համար կենսունակ միջավայր լինել չի կարող: Չնայած նյութական քաղաքակրթության աննախադեպ ձեռքբերումներին, մարդկությունը մինչև այժմ չի լուծել բոլորի համար հանապազօրյա հացի խնդիրը: Աշխարհում հարյուր միլիոնավոր մարդիկ, ներառյալ երեխաներ, տառապում են քաղցից կամ թերսնուցումից, ինչը սննդամթերքի պակասի հետևանքով չէ: Հաշվի առնելով տնտեսության շատ պարզ, բայց հիմնարար գործառույթը՝ ապահովելու արժանապատիվ ապրուստի միջոցներ, կարելի է եզրակացնել, որ համաշխարհային տնտեսությունը չի կատարում այդ առաջադրանքը: Պատասխանատու զարգացման պահանջով, վերջին շրջանում, կենսական բարիքների գոնե նվազագույն չափորոշիչներով ապահովման մոտեցումը կիրառվում է հազարամյակի զարգացման նպատակները սահմանելիս: Ընդհանրացնելով, հարկ է պատշաճ կարևորել առհասարակ զարգացման հումանիստական ուղղվածությունը, զարգացած երկրների կողմից տրամադրվող պաշտոնական օգնության ծավալի մեծացումը և դրա նպատակային օգտագործման մեխանիզմների երաշխավորումը:

### ***Մեթոդաբանական մոտեցումները զարգացման ուսումնասիրություններում***

Չարգացումը բազմաշերտ գործընթաց է, որում առկա հիմնախնդիրները օրգանապես միահյուսված են փոխայամանավորվածության բարդ կապերով: Այս իրողությունը մեթոդաբանական տեսակետից ենթադրում է համալիր բնույթի մոտեցումներ: Ամենից առաջ դա վերաբերում է տնտեսական զարգացման տեղին ու դերին ընդհանուր զարգացման համատեքստում: Տվյալ հարցի պարզաբանումը նպատակահարմար է սկսել տնտեսական և ոչ տնտեսական բազմապիսի գործոնների փոխհարաբերության քննարկումից: Ուղեցույցային կարող է լինել Շումպետերի դիրքորոշումը՝ «Այս կամ այն փաստը երբեք բացառապես կամ «զուտ» տնտեսական չէ, եթե հաշվի առնենք դրա խորքային պատճառները. մշտապես գոյություն ունեն նաև դրա ուրիշ, հաճախ ավելի կարևոր կողմեր»<sup>13</sup>: Այնուհետև նա կատարում է հետևյալ ընդհանրացումը. «Այնպես, ինչպես տնտեսական փաստերի մասին ընդհանրապես, մենք խոսում ենք նաև տնտեսական զարգացման մասին, որը բացատրելը մեր նպատակն է»<sup>14</sup>:

Տնտեսական զարգացման տեղի ու դերի վերաբերյալ կարելի է առանձնացնել երկու սկզբունքորեն տարբեր ընկալումներ: Դրանցից առաջինի համաձայն՝ տնտեսական զարգացմանը վերագրվում է գերակա դիրք հասա-

<sup>13</sup> Шумпетер Й., Теория экономического развития. М., „Прогресс“, 1982, с. 57.

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 58:

րակական կյանքի բոլոր մյուս ոլորտների նկատմամբ<sup>15</sup>: Գործնականում դա արտահայտվում է տնտեսական նպատակների գերադասումով՝ նյութապատակական արժեքների արմատավորմամբ, հարստության կուտակման մոլուցքով, սպառողական հոգեբանության լայն տարածմամբ, ծայրահեղ դեպքերում նաև տնտեսության զգալի մասի ստվերային բնույթով, կոռուպցիայի պարբերական դրսևորումներով, օպորտունիստական վարքի ծավալմամբ, անբարեխիղճ մրցակցության մեթոդների ինտենսիվ կիրառմամբ, բնական ռեսուրսների գիշատչական շահագործումով, չափազանց սոցիալական շերտավորումով և այլն: Փաստացի ընթացքին հիմնականում բնորոշ են այս կարգի դրսևորումները, ինչը խաթարում է ինչպես զարգացման մյուս տեսակները և ուղղությունները, այնպես էլ հենց տնտեսական զարգացումը: Այս դեպքում տնտեսական արտադրում է կյանքի մյուս կողմերը և փորձում փոխարինել դրանց: Հաճախ այդ կողմերը պարզապես ծառայեցվում են տնտեսականին, երբեմն էլ՝ զոհաբերվում դրան:

Տնտեսական զարգացման նշված ուղին չի կարող հեռանկարային համարվել որևէ երկրի ու նրա հանրության երկարաժամկետ, կենսունակ զարգացումն ապահովելու տեսանկյունից: Գիտակցվում և ընդունվում է, թե ոչ, համենայնդեպս, նորմատիվային իմաստով նախընտրելի է տնտեսական զարգացման տեղի և դերի հետևյալ ընկալումը, որի իրագործման անհրաժեշտությունն ավելի քան հասունացել է: Ըստ այդ ընկալման՝ տնտեսական զարգացումը որքան էլ կարևոր, սակայն բոլոր դեպքերում ընդամենը միջոց է, իսկ վերջնանպատակները տնտեսականի համեմատությամբ ավելի բարձրակարգ են և, ըստ էության, էկզոգեն՝ տնտեսական համակարգի նկատմամբ: Ընդհանուր առմամբ, խոսքը մարդկային զարգացման՝ որպես զարգացումն իմաստավորող ամփոփ հայեցակարգի մասին է: Դրան առանձին կանդիդատներն են քիչ անց, այստեղ միայն ընդգծենք, որ վերջին մի քանի տասնամյակում զարգացման վերաբերյալ տեսական մեկնաբանություններում ակնառու է մարդկային զարգացման ուղենիշի կարևորումը: Դա արտահայտված է զարգացման՝ որպես ազատ ընտրության շրջանակի ընդլայնման, մարդկային ներուժի իրացման, սոցիալական տիրույթում՝ բարեկեցության աճի, անհավասարության և աղքատության կրճատման, զբաղվածության բարելավման հայեցակարգային մշակումներում և ամփոփ ձևով՝ մարդկային զարգացման ցուցիչների ու համապատասխան հաշվետվությունների մեջ:

Տնտեսական զարգացման տեղի ու դերի վերաբերյալ նշված ընկալումները խորքի մեջ էկզիստենցիալ պատկերացումներ են: Անկախ սոցիալտնտեսական կարգավիճակից, բոլորն ունեն դրանցից մեկին կամ մյուսին համապատասխանող առօրյա կենսափիլիսոփայական մտայնություն: Ըստ էության, գոյություն ունի էկզիստենցիալ երկընտրանք, և դրա վերաբերյալ հանրության մեջ այս կամ այն կերպով կողմնորոշվածների հարաբերակցությունը զգալի ազդեցություն է թողնում փաստացի ընթացքի ուղղվածության և արդյունքների բնույթի վրա: Իսկ տվյալ հարցում որոշիչը նշված հարաբերակցությունն է տարբեր մակարդակներում որոշում ընդունողների շերտում:

<sup>15</sup> Տվյալ ընկալմանը չեն վերաբերում այն իրավիճակները, երբ զանգվածաբար նույնիսկ նվազագույն անհրաժեշտ ապրուստի հայթայթումը դառնում է գոյատևման բարդ խնդիր: Այդ դեպքում մարդիկ ակամա իրենց ջանքերն ու կենսաժամանակը հիմնականում տրամադրում են բազային կարիքները հոգալուն: Իրականում նման վիճակը ոչ միայն որևէ ընդհանրություն չունի զարգացման հետ, այլև վկայում է զարգացման լուրջ խոչընդոտի մասին, որի առկայությունը նշանակում է հետընթաց և դրա կոնսերվացում:

Դա նաև նշանակում է, որ զարգացման մեջ բեկումը պահանջում է համապատասխան տեղաշարժ էկզիստենցիալ ընկալումների ու դրանց իրականացման գործելակերպի մեջ:

Ջարգացման գործընթացի բազմակողմանի բնույթը անհրաժեշտ է դարձրել նաև դրա ուսումնասիրություններում միջգիտակարգային մոտեցումը և համագործակցությունը: Դրա գիտակցման և հստակ ձևակերպման մուշորինակ է Ջոն Միլի հետևյալ միտքը. «Քաղաքատնտեսությունն իր գործնական կիրառումներում անխզելիորեն միահյուսվում է սոցիալական փիլիսոփայության ուրիշ շատ ճյուղերի հետ: Եթե չհաշվենք խիստ մասնակի հիմնախնդիրները, ապա հազիվ թե կգտնվեն գործնական հարցեր՝ իրենց բնույթով նույնիսկ ամենից ավելի մոտ կանգնած զուտ տնտեսական հարցերին, որոնք կարելի է լուծել՝ հիմնվելով սոսկ տնտեսական նախադրյալների վրա»<sup>16</sup>: Արդի պայմաններում նման համագործակցություն ծավալվում է մի կողմից՝ տնտեսագիտության ներքին տիրույթում, որին մասնակցում են զարգացման տնտեսագիտությունը, տնտեսական պատմությունը, քաղաքատնտեսությունը, էվոլյուցիոն տնտեսագիտությունը, նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը, համեմատական տնտեսագիտությունը, սոցիալ-տնտեսական վիճակագրությունը, տնտեսական ժողովրդագրությունը և այլն, մյուս կողմից՝ հասարակական և հումանիտար գիտությունների ընդհանուր տիրույթում:

Ջարգացման տնտեսագիտության մեթոդաբանական մոտեցումների առումով հիշարժան է Մայքլ Թոդարոյի դիրքորոշումը: «Տնտեսական զարգացում» գրքի նախաբանում այդ ուղղության փորձառու տնտեսագետը ձևակերպում է իր մոտեցման նորույթները, որոնք պարունակում են նաև դասավանդման մեթոդիկայի տարրեր: Առանձնացնենք այն հիմնական կետերը, որոնք արտացոլում են զարգացման հետազոտությունների մեթոդաբանությունը.<sup>17</sup>

- Տնտեսական զարգացման ուսումնասիրություն՝ հիմնախնդիրների գլխավոր շրջանակի համատեքստում, ինչպիսիք են՝ աղքատությունը, անհավասարությունը, գործազրկությունը, բնակչության աճը, բնամիջավայրային քայքայումը և ծայրամասային ստագնացիան:
- Հիմնախնդիրներին ու քաղաքականությանը կողմնորոշված մոտեցման ընդունում՝ խրախուսելու երրորդ աշխարհի տնտեսական խնդիրների ըմբռնումը և հասնելու դրանց հնարավոր հանգուցալուծման շուրջ անկախ և տեղեկացված դատողությունների, ինչպես նաև քաղաքականության վերաբերյալ հետևությունների:
- Համակարգային մոտեցման կիրառում, ինչը հատկապես կարևորվում է հետևյալ առումներով. ամեն մի հիմնախնդրի ընդհանուր բնույթի, գլխավոր հարցերի և տարբեր երկրներում դրսևորման ձևերի ճիշտ շարադրում, հիմնական նպատակների և հնարավոր թիրախների, հիմնախնդրի պարզաբանման մեջ տնտեսագիտական վերլուծության դերի, ինչպես նաև քաղաքականության հնարավոր այլընտրանքների ու դրանց հավանական հետևանքների ներկայացում:
- Հիմնախնդիրների մասշտաբից և կարևորությունից ելնելով՝ տարբեր երկրների միջև առանձնահատկությունների և ընդհանրությունների բացահայտում:

<sup>16</sup> Милль Дж., Основы политической экономии, т. 1, М., „Прогресс“, 1980, с. 76.

<sup>17</sup> Տե՛ս Todaro M., Economic Development. Addison-Wesley Publishing Company, 1996:

- Կենտրոնացում զարգացող երկրների՝ ոչ միայն որպես անկախ պետությունների լայն շրջանակի վրա, այլև միմյանց նկատմամբ դրանց հարաբերության և համաշխարհային տնտեսությունում հարուստ երկրների հետ փոխգործակցության մեջ:
- Ջարգացման և թերզարգացման հիմնախնդիրները ինստիտուցիոնալ և կառուցվածքային (ոչ տնտեսական), ինչպես նաև տնտեսական հայեցակետից մեկնաբանելու անհրաժեշտության ընդունում՝ հանրահայտ ընդհանուր տնտեսագիտական սկզբունքների, տեսությունների և քաղաքականությունների համապատասխան կերպափոխումով: Դրանով փորձ է արվում միավորելու ռեկանտ տեսությունը իրատեսական ինստիտուցիոնալ վերլուծությունների հետ:
- Ջարգացման և թերզարգացման դիտարկում թե՛ հայրենական, թե՛ միջազգային համատեքստում՝ շեշտելով աճող փոխկախվածությունը համաշխարհային տնտեսության այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են պարենը, էներգիան, բնական ռեսուրսները, տեխնոլոգիան, տեղեկատվությունը և ֆինանսական հոսքերը:
- Թերզարգացման տնտեսական, սոցիալական և ինստիտուցիոնալ մեծաթիվ՝ որպես սերտորեն շաղկապված հիմնախնդիրների քննարկումը, ինչը պահանջում է համաժամանակյա և կոորդինացված մոտեցումներ դրանց լուծման նկատմամբ:

Այսպիսով՝ այս մոտեցումների համալիր կիրառումը կարող է երաշխավորել զարգացման հետազոտությունների համակողմանի և խորքային բնույթը: Հարկ է նաև նշել, որ դրանք մշակված և ադապտացված են զարգացող երկրների համար: Հատկանշական է, որ Մ. Թոդարոյի համոզմամբ՝ զարգացման տնտեսագիտությունը նույնը չէ, ինչ որ զարգացած կապիտալիստական երկրների տնտեսագիտությունը (արդի «նորդասական» տնտեսագիտությունը)<sup>18</sup>: Ըստ որում, Նյու Յորքի համալսարանի ճանաչված պրոֆեսորը թերևս քննադատական ենթատեքստով է նշում, որ ավանդական նորդասական տնտեսագիտությունը «ընդունում է տնտեսական «ռացիոնալությունը» և զուտ մատերիալիստական, ինդիվիդուալիստական, էգոիստական կողմնորոշումը տնտեսական որոշումների կայացման նկատմամբ»<sup>19</sup>:

### ***Տնտեսական զարգացման հիմնական բնութագրերը և ուղղությունները***

Ելնելով ռեսուրսների սահմանափակությունից՝ տնտեսական զարգացման անհրաժեշտ արտահայտություն է դառնում արդյունավետության բարելավումը: Նկատի են առնվում դրա բոլոր հիմնական դրսևորումները՝ տեղաբաշխման, տեխնիկատնտեսական, սոցիալ-տնտեսական, սոցիալական: Եթե արդյունավետության մակարդակի բարձրացում տեղի չի ունենում, ապա այնքան էլ տեղին չէ խոսել սոցիալ-տնտեսական զարգացման մասին: Տնտեսական էվոլյուցիայի վեկտորային ուղղվածությունը տրվում է օգտագործման տարբեր այլընտրանքների միջև առկա ռեսուրսների տեղաբաշխումով: Այս հարցում վճռորոշ է առաջնահերթությունների ճիշտ սահմանումը՝ հիմնվելով հանրության կենսականորեն կարևոր պահանջումների գերադասման վրա:

Տնտեսական զարգացումը վերաբերում է նաև ռեսուրսների սահմանափակության բնույթի, դրսևորման ձևերի ու չափերի փոփոխությանը: Որքան էլ

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 7:

<sup>19</sup> Նույն տեղում:

ռեսուրսների սահմանափակությունն ընդհանուր առմամբ օբյեկտիվ իրողություն է, այդուհանդերձ, այն քարացած չի մնում և ենթակա է փոփոխությունների: Այդ առումով, զարգացումը նշանակում է ռեսուրսների սահմանափակության աստիճանի նվազում, այդ թվում՝ նոր ռեսուրսների կամ դրանց օգտագործման նոր եղանակների հայտնաբերման միջոցով: Այլ խոսքով՝ տնտեսական զարգացումը ռեսուրսների սահմանափակությունը հաղթահարելու հնարավորությունների բացահայտման և արդյունավետ իրացման գործընթաց է:

Ռեսուրսների սահմանափակության աստիճանը նվազեցնելու հնարավոր միջոց է պահանջմունքների ռացիոնալ սահմանափակումը: Թեև պահանջմունքների անսահմանափակությունը, որպես արդի տնտեսագիտության ելակետային սկզբունք, հիմնարար է մեյնսթրիմի մեջ, այդուհանդերձ, դրա քննական վերանայումը և իրագործումը կարող են համարվել զարգացման կարևոր դրսևորում: Իհարկե, դա չափազանց բարդ խնդիր է: Դեռևս հին աշխարհում այս իրողությանը քաջատեղյակ էին: Բավական է նշել Պլուտարքոսի հետևյալ միտքը. «Չէ՞ որ անհրաժեշտի պահանջմունքի հետ միասին և դրա հետևից գալիս է հավելուրդային ծարավը»<sup>20</sup>: «Արժաթասիրության մասին» տրակտատում հույն մտածողը նշում է. «...ավելորդ բաներ ունենալը չի վերացնում ավելորդ բաների կարիքը»<sup>21</sup>, քիչ անց նաև փստորոշում է այդ երևույթը որպես «...անհագություն և արժաթասիրություն, որ ծագել է խոտելի ու բանականությանը հակառակ դատողությունից: Եթե մարդ դա դուրս չնետի, ինչպես երիզորդին, ապա չի դադարի ավելորդ բաների կարիք զգալ, այսինքն՝ ցանկանալ այն, ինչի կարիք չի զգում»<sup>22</sup>: Պլուտարքոսի տված փստորոշումը արդիական է նաև ներկայումս, մինչդեռ նրա առաջարկած բուժման միջոցի գիտակցված կիրառման հարցում առանձնակի առաջընթաց չի արձանագրվել:

Այսպես՝ ավելի քան երկու հազար տարի անց նմանատիպ իրավիճակ է նկարագրում ժամանակակից ամերիկյան տնտեսագետ Դելոնգը: Նշելով, որ Հյուսիսատլանտյան տարածաշրջանում գրեթե ամեն ոք արդեն ունի բավականաչափ սնունդ, հագուստ, բնակարան, նա շարունակում է. «Մինչդեռ մենք ցանկանում ենք ավելին, վրդովվում ենք, երբ չենք հասնում դրան և բավականաչափ ինքնագիտակից ենք՝ իմանալու համար, որ պերճանքի առարկաները դառնում են հարմարություններ, իսկ հետո՝ անհրաժեշտ կարիքներ, ինչպես նաև՝ որ մենք շատ ճարտար ենք նոր պերճանքի առարկաների հայտնագործման մեջ՝ ջանալով հասնելու դրանց»<sup>23</sup>: Քննարկվող հարցում միանշանակ դատողությունները տեղին չեն, քանի որ այստեղ առկա են միահյուսված շերտեր, ինչը պահանջում է տարբերակված մոտեցում:

Ջարգացումն ուղեկցվում է նոր պահանջմունքների ձևավորմամբ, դրանց բազմազանության մեծացմամբ: Անշուշտ, դա դեռևս չի նշանակում, որ ամեն մի նոր պահանջմունք, դրա բավարարման որևէ այլ միջոց կամ եղանակ զարգացման վկայություն են: Սակայն զարգացման ներքին տրամաբանությանն առավելապես հակասում է առկա պահանջմունքների չափից ավելի բավարարումը՝ ներառյալ դրա խեղաթյուրված ձևերի գործադրումը: Հետևա-

<sup>20</sup> Պլուտարքոս, Երկեր, Եր., «Հայաստան», 1988, էջ 431:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 561:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 563:

<sup>23</sup> **Bradford Delong J.**, Inequality on the Horizon of Need. [www.project-syndicate.org](http://www.project-syndicate.org). May 30, 2013.

բար՝ առողջ զարգացման տեսանկյունից հիմնարար նախադրյալ է «անսահմանափակ» պահանջմունքների խելամիտ չափավորումը՝ դրանց կազմի, կառուցվածքի, բավարարման նորմալ ձևերի ու անհրաժեշտ մեծության առումով: Դրան հասնելու հնարավոր ուղին գիտակցված ու կամավոր ինքնասահմանափակումն է, որն իր հերթին մարդու լիարժեք հասունացման ձևով ինքնազարգացում է, ինչպես նաև անուղղակի տարբեր ձևերով հանրային սահմանափակումները: Հակառակ դեպքում, անսահմանափակ պահանջմունքների գերբավարարման վրա անհիմաստ վատնվում են արժեքավոր սակավ ռեսուրսները՝ չդառնալով իրական զարգացման խնդիրները լուծելու միջոց, ինչպես նաև փոխակերպվելով անհետաձգելի կարիքների թերբավարարման պատճառի:

Այսպիսով՝ զարգացման համատեքստում կարևորվում է առաջընթացը սպառման մշակույթի ձևավորմամբ և դրա կարգավորիչ գործառնությունների ամրապնդմամբ: Նման ընկալման խորապատկերում ցուցադրական սպառումը դառնում է զարգացմանը հակասող պարզունակ մի երևույթ, որով անհաջող փորձ է արվում քողարկելու հետամնացությունը մարդկային հասունացման առումով: Տվյալ հետևությունը վերաբերում է նաև միջոցների ինքնանպատակ մխմանը, անխոհեմ շռայլմանը, ազահությանը, ժլատությանը և այլն: Ընդհանրացնելով կարելի է ասել, որ, մի կողմից՝ զարգացումը մարդկային արժանիքների, դրական կողմերի քաջալերման, հետևողական մշակման ու ամրապնդման, սոցիալական գնահատման և ժառանգորդման, իսկ մյուս կողմից՝ մարդկային արատների, բացասական կողմերի հաղթահարման, ճնշման գործընթաց է:

Պահանջմունքների ու ռեսուրսների փոխհարաբերության տեսանկյունից՝ զարգացումը դիտվում է որպես դրանց համակարգման՝ փոխհամաձայնեցման, համապատասխանեցման բարելավում: Բացի կատարված անդրադարձերից, խիստ կարևոր է նաև առկա ռեսուրսների օգտագործման չափի հաշվառումը: Հաճախ գոյակցում են ռեսուրսների սակավության մատնանշումը և դրանց թերի, սխալ կամ անարդյունավետ օգտագործումը: Այդ առումով տրնտեսական զարգացումը ենթադրում է կայուն տեղաշարժ առկա ռեսուրսների լրիվ և արդյունավետ զբաղվածության ուղղությամբ: Ասվածը վերաբերում է հատկապես մարդկային ռեսուրսներին. ըստ այդմ՝ տնտեսական զարգացումը գործազրկության մակարդակի հետևողական կրճատման, բարձր և կայուն զբաղվածության ակտիվ քաղաքականության հաջող իրականացումն է:

Տնտեսական զարգացման համար առանցքային նշանակություն ունի քաղաքակիրթ ձեռնարկատիրական գործունեությունը: Ֆունկցիոնալ առումով դա, ըստ էության, տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժն է: Հետևաբար՝ վճռորոշ է դառնում ձեռնարկատիրական ընդունակությունների պատշաճ ձևավորումը, դրանց դրսևորման ու իրացման մրցակցային պայմանների ստեղծումը, հակամրցակցային մթնոլորտի բացառումը, ներդրումային ակտիվության խթանների ապահովումը և, առհասարակ, պահանջվող ինստիտուցիոնալ նորմալ միջավայրի երաշխավորումը:

Տնտեսական զարգացման՝ որպես դինամիկ փոփոխությունների կատարման մեջ Շումպետերը կարևորում էր արտադրության միջոցների նոր համակցությունների դերը: Նա բնորոշ էր համարում, որ դրանք կարող են առաջանալ (կամ առաջանում են) միայն դիսկրետ ճանապարհով: Այդ դեպքում, նրա ընկալմամբ, զարգացման ձևը և բովանդակությունը տրվում են

«նոր համակցությունների իրականացում» հասկացությամբ<sup>24</sup>: Իհարկե, նման ընդհանրացման նպատակը նոր համակցությունների վճռորոշ դերի շեշտադրումն է: Իսկապես, առանց դրանց, պարզապես անհնարին կդառնա տնտեսական զարգացումը: Մյուս կողմից՝ կարիք չկա բացարձակացնելու նշված դրույթը: Կատարենք որոշ վերապահումներ. նախ՝ դա ուղղակիորեն վերաբերում է տնտեսական զարգացմանը, ուստի դժվար է տարածել ընդհանուր զարգացման վրա, որն անհամեմատ ավելի շատ վեկտորներ ունի և չի կարող հանգեցվել նոր համակցությունների: Բացի այդ, նոր համակցություններն ինքնին չեն երաշխավորում զարգացումը բովանդակային իմաստով՝ թեկուզև նկատի ունենալով դրանց անհաջողության դեպքերը: Այնուհետև՝ նույնիսկ հաջողված նորամուծությունների պարագայում չեն կարող բացառվել դրանց բովանդակության ու ձևի միջև հակասությունները կամ անհամապատասխանությունը: Վերջապես՝ զարգացում կարող է նշանակել ոչ միայն արտադրության միջոցների նոր համակցություն, այլև դրան մասնակցող տարբեր սուբյեկտների ու իրային գործոնների առանձին-առանձին նորացում՝ բարելավում, կատարելագործում, արդիականացում, ինչպես նաև հաջողված ինստիտուցիոնալ նորամուծություններ:

Ձեռնարկատիրոջ կարգավիճակը Շումպետերի կողմից միարժեքորեն վերագրվում էր նորարարներին: Նա գրում է. «Ձեռնարկատեր մենք անվանում ենք տնտեսական սուբյեկտներին, որոնց գործառույթը հենց նոր համակցությունների իրականացումն է, և ովքեր հանդես են գալիս որպես դրա ակտիվ տարր»<sup>25</sup>: Այսպիսով՝ տնտեսական զարգացման մեջ հանգուցային նշանակություն ունի գիտությունը և դրա արդյունքները կիրառող նորարարական զարգացումը: Գործնական առումով դա ժանրակշիռ ակնարկ է այն մասին, որ զարգացման քաղաքականության մեջ հիմնարար տեղ պետք է ունենա նորամուծական զարգացման առաջնահերթությունը:

Դրա իրականացման ընդհանուր նախադրյալը գործարար ակտիվության պատշաճ մթնոլորտի՝ պայմանների, խթանների և սահմանափակումների ապահովումն է: Նորամուծական համակարգը չի կարող կայանալ այնտեղ, որտեղ ձեռնարկատիրական գործունեության մթնոլորտն անբարենպաստ է: Այս հարցում գործնականորեն որոշիչ է այն հանգամանքը, թե ինչ հարաբերակցություն կա տնտեսական ակտիվության տիպային եղանակների միջև<sup>26</sup>: Եթե գերակշռում են բարձր, մենաշնորհներով երաշխավորված եկամուտներ ապահովող բացառապես ավանդական գործունեության ձևերը, ինչպես օրինակ՝ առևտուրը, ապա նորամուծական զարգացման խթանները չեն ունենա բավարար դրդիչ ներուժ:

<sup>24</sup> Տե՛ս **Шумпетер Й.**, նշվ. աշխ., էջ 158-159:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 169-170:

<sup>26</sup> Նկատի ունենք հարաբերակցությունը *տնտեսական ռենտայի հետապնդում* (economic rent-seeking) և *քաղաքական ռենտայի հետապնդում* (political rent-seeking) կոչված գործունեության եղանակների միջև: Նորամուծական զարգացման նպաստավոր միջավայր հնարավոր է ապահովել առաջինի շրջանակներում: Իսկ եթե գերակշռում է երկրորդը, ապա դա ոչ միայն կանոն է արժեքավոր ռեսուրսներն այդ շրջապտույտի մեջ, այլև կոշտ անհավասարություն է ստեղծում այդ երկու եղանակների միջև մրցակցային պայմանների, շանսերի (հնարավորությունների) և նախընտրելիության աստիճանի առումով: Բացի այդ, նման մեկնաբանությունը տեղին է նաև ձեռնարկատիրության տիպերի վերաբերյալ Բաումոլի կատարած տարբերակմամբ: Նա առանձնացրել է ձեռնարկատիրության *արտադրողական, անարտադրողական և ավերիչ* տեսակները: Տե՛ս **Baumol W.**, *Entrepreneurship: Productive, Unproductive and Destructive*. Journal of Political Economy, Vol. 98(5), 1990:

Սկզբունքորեն կարևոր է նաև տնտեսության իրական և ֆինանսական հատվածների հարաբերակցությունը, դրանց համեմատական գրավչությունը և ազդեցության չափը: Այս տեսակետից՝ առողջ զարգացման բոլոր սցենարների ընդհանրությունը տնտեսության իրական հատվածի հիմնարար դերի ոչ թե պարզապես ընդունումն է, այլ գործնական իրականացումը: Նշված հատվածների բնական հարաբերակցությունը զգալիորեն խախտված է, ինչը 2008 թ. ձգնաժամի հիմնական պատճառներից է: Հետևաբար՝ դրա հաղթահարման լիարժեք միջոցը նույնպես շաղկապված է ֆինանսական հատվածի բուն գործառնության դերի վերականգնման, այսինքն՝ խնայողությունների ներգրավման և դրանք առավելապես իրական ներդրումների փոխակերպման, վերջին հաշվով, դրա միջնորդային սպասարկող դերով սահմանափակման հետ<sup>27</sup>: Այդ հիմնախնդիրն առկա է նաև ՀՀ-ում, ըստ որում, դրա լուծումն ավելի արդիական է, քանի որ այն, փաստորեն, թելադրող ու սահմանափակող դեր է ստանձնել՝ վերածվելով նորմալ տնտեսական զարգացման խոչընդոտի: Բավական է նշել վարկերի և հատկապես գործարար վարկերի չափազանց բարձր տոկոսադրույքները: Իրական հատվածում գրեթե բացառվում են այնպիսի ներդրումային նախագծերը, որոնց հավանական շահավետությունը համատեղելի է այդքան թանկ վարկերի հետ:

#### ***Մարդկային զարգացման հիմնախնդրի հայեցակարգային դրվածքը***

Տնտեսագիտության մեջ մարդու տեղի ու դերի վերաբերյալ ընկալումների փոփոխության ընդհանուր ուղղվածությունն այն է, որ մարդկային գործունն ավելի ու ավելի կարևորվում է, ինչպես նաև բարձրանում է նրա կարգավիճակը ֆունկցիոնալ դերի առումով: Այսպես՝ եթե դասական համակարգում որպես նպատակ էր դիտվում հարստության ստեղծումը և դրա ավելացումը աշխատանքի բաժանման, մասնագիտացման և արտադրողականության աճի շնորհիվ, իսկ մարդու գործունեությունը հիմնականում սահմանափակվում էր այդ նպատակին հասնելու միջոցներից մեկը լինելով, ապա ներկայումս նպատակներն իմաստավորվում են, վերջին հաշվով, մարդուն ուղղվածությամբ, նրա հետ անխզելի շաղկապումով և կյանքի որակի բարելավմամբ:

Տնտեսական կյանքում մարդու ֆունկցիոնալ դերի ընկալման արմատական վերանայումը պետք է հասկանալ ոչ թե մի դերը մյուսով փոխարինելու, այլ տարբեր դերերի համադրման իմաստով: Այսպես՝ որքան էլ զարգացման գործընթացը մարդուն ավելի բարձրակարգ տեղ ապահովի, միևնույն է, չի կարող լրիվ բացառել աշխատողի կամ արտադրողի նրա գործառնությամբ: Այդ տեսակետից խնդիրն այն է, որ մարդու դերը պարզապես չհանգեցվի միայն այդ գործառնության կատարմանը: Համեմայնդեպս, էական հանգամանք է, որ զարգացումն ուղղակիորեն նախ վերաբերում է հենց տվյալ գործառնությանը: Հավանաբար, այս պատճառով գերմանական պատմական դպրոցը կարևորում էր ոչ այնքան նյութական հարստությունը, որքան այն ստեղծելու կամ

<sup>27</sup> Դեռևս Քեյնսը ժամանակին խիստ կարևորել է այս խնդիրը և առաջադրել սկզբունքային լուծում, որն ունի նաև նախագուշացնող բնույթ: Այսպես՝ նա գրել է. «Սպեկուլյանտները, որպես պղպջակներ ձեռնարկատիրության անընդհատ հոսանքի վրա, կարող են ոչ մի վնաս չպատճառել: Սակայն իրադրությունը լուրջ է, երբ ձեռնարկատիրությունն է դառնում պղպջակ սպեկուլյացիայի հորձանուտում: Երբ երկրի կապիտալի ընդլայնումը դառնում է խաղատան գործունեության կողմնակի արդյունք, ապա հավանական է, որ գործը վատ կկատարվի»: **Steu Keynes J.,** *The General Theory of Employment, Interest, and Money.* A Harvest Book, Harcourt Brace & Company, 1991, էջ 159:



վերստեղծելու մարդկային կարողությունները: Այդ գաղափարը բազմակողմանիորեն մշակվում է մարդկային կապիտալի տեսության մեջ: Իր հերթին, մարդկային կապիտալը հիմնովին փոխում է հարստության նախկին պատկերացումը՝ դառնալով դրա հանգուցային ակտիվ բաղադրիչը և ազատելով այն նյութականի նեղ շրջանակից:

Շաղկապված մյուս հիմնարար հարցն այն է, թե այդ գործառույթի տիրույթում ինչպես պետք է մեկնաբանել մարդու և նրա աշխատանքի մասնակցությունը. որպես արտադրության սովորակա՞ն գործոն, որը սկզբունքորեն չի տարբերվում մյուս գործոններից, թե՞ ելակետ ընդունել դրանց էական տարբերությունը: Այդ առումով ուշագրավ է նորդասական տեսակետի քննադատությունը Ջոզեֆ Ստիգլիցի կողմից: Նա նշում է. «Նորդասական տնտեսագիտության մեծ հնարքներից (ոմանք կարող են ասել «ներըմբռնումներից») մեկը աշխատանքն արտադրության որևէ այլ գործոնի նման մեկնաբանելն է: Արտադրանքը նշվում է որպես արտադրության գործոնների ֆունկցիա՝ պողպատ, մեքենաներ և աշխատանք: Մաթեմատիկորեն աշխատանքը մեկնաբանվում է ապրանքի նման՝ կարողանալով մարդուն ներշնչել այնպիսի մտածողություն, որ աշխատանքը սովորական ապրանքի նման է, ինչպես պողպատը կամ պլաստիկը: Սակայն աշխատանքը որևէ ուրիշ ապրանքի նման չէ»<sup>28</sup>: Այդ տեսակետը Ստիգլիցը հիմնավորում է՝ վկայակոչելով մյուս գործոններին ոչ բնորոշ կարևոր իրողություններ՝ մտահոգությունը մարդկանց բարեկեցության, մենեջմենթի, ընդհանուր առմամբ, խոր մտահոգությունը աշխատանքի մոտիվացիայի համար: Նա շեշտում է, որ մարդու աշխատանքի և արտադրության մյուս գործոնների միջև տարբերությունն առաջանում է աշխատանքի մարդկային կողմից<sup>29</sup>: Այսպիսով՝ նույնիսկ այդ հիմնարար դերում անհրաժեշտ է հաշվի առնել մարդկային գործոնի բացառիկ բնույթը:

Արդի տնտեսագիտությունը սոցիալ-տնտեսական մի շարք երևույթների ուսումնասիրության ժամանակ տարբերակում է էնդոգեն (ներծին) և էկզոգեն (արտածին) գործոնները կամ փոփոխականները: Մինչև այժմ դա չի արվել զարգացման հիմնախնդիրների քննարկման համատեքստում, սակայն նպատակահարմար է կատարել հատկապես մարդկային զարգացման նկատմամբ: Զարգացումն՝ ընդհանրապես, տնտեսական զարգացումը՝ մասնավորապես և մարդկային զարգացումն՝ առանձնապես, նախևառաջ, էնդոգեն բնույթ ունի, քանի որ, վերջին հաշվով, պայմանավորված է և իմաստավորվում է մարդկանց ինքնազարգացմամբ: Առանց զանգվածային արդյունավետ ինքնազարգացման՝ չի կարող հաջողությամբ ընթանալ նաև զարգացումը էկզոգեն առումով: Սա ակնհայտորեն հաստատվում է կրթության օրինակով. դինամիկ տնտեսական զարգացման անհրաժեշտ նախադրյալներից են ինտենսիվ ներդրումները մասնագիտական կրթության մեջ: Անհնարին է անտեսել այս օրինաչափությունը և ապահովել կայուն տնտեսական զարգացում:

Սակայն, կրթությունից բացի, ինքնազարգացումը ենթադրում է նաև մի շարք այլ՝ ոչ պակաս կարևոր բաղադրիչներ: Իրավացիորեն այդպիսիք են համարվում դիրքորոշումները կյանքի, աշխատանքի, հանգստի, սեփական անձի և մյուսների նկատմամբ, կենսական արժեքների համակարգը՝ ներառ-

<sup>28</sup> Stiglitz J., Employment, Social Justice and Societal Well-being.-International Labour Review, 2002, N1-2, p. 10.

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղը:

յալ ճիշտ վերաբերմունքը հոգևոր ու նյութական, մնայուն և անցողիկ, սոցիալական և անհատական արժեքների հանդեպ, դրանով պայմանավորված գործունեության նպատակադրումները, դրդապատճառները և մոտեցումները միջոցների ընտրության վերաբերմամբ: Մարդու էնդոգեն զարգացման գործընթացը, ըստ էության, շաղկապված է սեփական ներուժի գիտակցման, դրա ձևավորման և իրացման ձգտումների, այսինքն՝ հասունացման, ինքնակատարելագործման և բարելավման մղումների հետ:

Էկզոգեն տեսակետից տնտեսական զարգացումը հիմնականում վերաբերում է մարդկանց կենսագործունեության տարբեր միջավայրերում տեղի ունեցող առաջադիմությանը: Սովորաբար ընդունված է առանձնացնել բնական, տեխնոլոգիական և սոցիալական միջավայրեր<sup>30</sup>: Դրանք օրգանապես միահյուսված են և ինտենսիվորեն փոխներգործում են: Զարգացման հեռատես ու խորաթափանց ռազմավարության բնութագրիչներից մեկը այդ միջավայրերի՝ որքան կարելի է ներդաշնակ փոփոխություններն են: Դա խիստ դժվար լուծելի խնդիր է, որը, համենայնդեպս, անհրաժեշտ է ընդգրկել առավել հրատապ հարցերի օրակարգում: Տիպական է ներկա իրավիճակը. նախընթաց տասնամյակների բուռն տնտեսական աճն աննախադեպ մեծացրել է մարդածին ճնշումը բնության վրա, հանգեցրել բնապահպանական ճգնաժամի՝ դրա հաղթահարումը դարձնելով համաշխարհային գերակա հիմնախնդիր, քանի որ ուղղակիորեն վերաբերում է մարդկության կենսամիջավայրին, դրանում տեղի ունեցող քայքայման տարաբնույթ հետևանքներին, ահագնացող սպառնալիքներին և պատճառվող վնասներին: Հետևաբար՝ բնապահպանական գիտակցության արթնացումը, պահանջների առաջադրումը և, առհասարակ, «կանաչ» զարգացման հրամայականի խորքային ընկալումը դարձել են նախ՝ առողջ կյանքի պահպանման, ապա՝ դրա հիման վրա նորմալ զարգացման պայման: Այս ամենը կենսականորեն կարևոր է նաև Հայաստանի համար. առանց անհրաժեշտ բնապահպանական քաղաքականության հետևողական իրականացման՝ կայուն զարգացումը պարզապես բացառվում է:

Մարդկային զարգացման հայեցակարգն ունի մարդակենտրոն բնույթ: Ըստ այդմ առանձնացնելով էնդոգեն և էկզոգեն դրսևորումները, անհրաժեշտ է դրանք համադրել նաև: Էնդոգեն և էկզոգեն իրավիճակներն ու զարգացումները փոխպայմանավորված են, կերպավորում են միմյանց: Էկզոգենի մեջ էլք է ստանում ու առարկայացած արտահայտվում բուն էնդոգենը: Մյուս կողմից՝ էկզոգենն ինչ-որ ձևով ու չափով ազդում է էնդոգենի վրա: Դրանց ճիշտ ուղղությամբ համընթաց դինամիկայի ապահովումը զարգացման նախընտրելի ուղին է: Դա ամենից առաջ ենթադրում է մարդկային կապիտալի պաշարի պահպանում, մեծացում և որակի բարձրացում: Մի առումով՝ դա տնտեսական զարգացման նախադրյալ և հզոր լծակ է, մյուս առումով՝ դրա նպատակներից և վերջնարդյունքներից մեկը: Դրանց ապահովումը պահանջում է ծավալուն ներդրումներ մարդկային կապիտալի մեջ: «Տնտեսող» մոտեցումն այս հարցում կարճատեսության, ինքնախաբեության, զարգացման

<sup>30</sup> Այստեղ «սոցիալականը» օգտագործվել է լայն իմաստով, հետևաբար, այդ տրամաբանությամբ, սոցիալական միջավայրը ներառում է տնտեսական, քաղաքական, իրավական, ինստիտուցիոնալ, քաղաքացիական, բարոյահոգեբանական, ինչպես նաև, նեղ իմաստով, սոցիալական միջավայրերը: Դրանցից յուրաքանչյուրը կարող է ունենալ իր բաղկացուցիչ մասերը: Այսպես՝ տնտեսական միջավայրը կազմավորվում է գործարար, մրցակցային, ներդրումային, աշխատանքային և այլ միջավայրերից:

ներուժի սպառման նշան է: Արթուր Պիգուի պատկերավոր ձևակերպմամբ՝ «Ամենակարևորը մարդու առողջության, խելքի և բնավորության մեջ ներդրումներն են»<sup>31</sup>:

Նման մոտեցումը կիրառելի է նաև սոցիալական կապիտալի նկատմամբ: Նորմալ զարգացման դեպքում վերջինս ոչ միայն չի կրճատվում և արժեզրկվում, այլև դինամիկ կերպով ընդլայնվում է ու ամրապնդվում: Սոցիալական կապիտալի ձևավորումը, կուտակումը, պահպանումը և վերարտադրությունը նշանակալից են ոչ միայն տնտեսական զարգացման, այլև ընդհանուր մարդկային զարգացման համար: Խոսքը սոցիալական կապիտալի հիմնատարրերի մասին է, ինչպիսիք են արդարությունը, ազատությունը, փոխադարձ վստահության մթնոլորտը, համերաշխությունը, համախմբվածությունը, համագործակցությունը, անվտանգությունը, կայունությունը և պաշտպանվածությունը, փոխօգնությունը, իրավահավասարությունը և օրինականությունը, զանգվածային բարձր իրավագիտակցությունը, քաղաքացիական հանրության մասնակցային ակտիվությունը, անհատի, բիզնեսի և պետության սոցիալական պատասխանատվությունը, բարոյահոգեբանական առողջությունը, բարեկրթությունը սոցիալական շփումների մեջ և այլն:

Ըստ այսպիսի տարրերի՝ Հայաստանում սոցիալական կապիտալի պաշարը և որակը ոչ միայն հեռու են բավարար լինելուց, այլև շարունակվում է դրանց զգալի մասի քայքայումը: Ելնելով այն բանից, որ իրական զարգացումը նաև սոցիալական կապիտալի մեծացման և օգտագործման գործընթաց է, առկա բացասական միտումների բեկման և երկարաժամկետ կայուն զարգացման երաշխավորման առումով նպատակահարմար է ՀՀ տնտեսական զարգացման ռազմավարությունը հենել տնտեսության սոցիալ-շուկայական մոդելի վրա:

<sup>31</sup> Pigou A, Socialism versus Capitalism. London, Macmillan, 1937, p. 138.

**АТОМ ВАРДАНЯН**


Доцент кафедры „Экономической теории” АГЭУ,  
кандидат экономических наук

**Концептуальные восприятия экономического развития.**- В статье рассмотрены основные концепции экономического развития с доминирующей позиции человеческого развития, ориентированного на фундаментальные, жизненные ценности и направленное на полноценную реализацию человеческого потенциала. Представляя сущность и общее понимание экономического развития, автор затем рассматривает вызов ответственного развития, подчеркивая предопределяющую роль государства в его обеспечении или провале. В статье обсуждены также методологические подходы к исследованиям развития, основные характеристики и направления экономического развития. Предложена концептуальная постановка проблемы человеческого развития, применяя к нему разграничение аспектов эндогенного и экзогенного развития.

**ATOM VARDANYAN**

Associate Professor at the Chair of  
„Theory of Economics” at ASUE,  
PhD in Economics

**Conceptual Perceptions of Economic Development.**- The article considers major concepts of economic development from the dominant position of human development which is oriented towards fundamental values and directed to the full realization of human potential. Presenting the essence and general understanding of economic development, the author then discusses the challenge of responsible development emphasizing the decisive role of state in its provision or failure. The article also considers methodological approaches in development studies, main characteristics and directions of economic development. A conceptual statement of human development problem is proposed applying a division of endogenous and exogenous aspects of development to it.



## ՀՈՎՍԵՓ ԱՐԱՋԱՆՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՈՐԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Տնտեսագիտության մեջ չափողականության խնդիրը սկսվում է արժեքի տեսությունից<sup>1</sup>: Տնտեսագիտական մտքի պատմությունից հայտնի են արժեքի տարբեր տեսություններ: Արժեքի աշխատանքային տեսության ներկայացուցիչները փորձում էին հիմնավորել, որ արժեքը արդյունքի (ապրանքի) մեջ առարկայացած աշխատանքն է և չափվում է աշխատաժամանակով: Բնականաբար, առաջացավ դրա *չափման* անհրաժեշտությունը: Այդ տեսության հիմնական ներկայացուցիչներից է Կ. Մարքսը, ով իր վերլուծության ընթացքում բախվեց լուրջ հակասությունների: Ա. Սմիթը, լինելով արժեքի աշխատանքային տեսության հիմնադիրներից, հրաժարվեց միագործոնային վերլուծության սկզբունքից և արժեքի ձևավորման հիմքում դրեց ոչ միայն աշխատանքը, այլ նաև կապիտալն ու հողը: Թեպետ Ա. Սմիթի տեսությունն առաջընթաց քայլ էր արժեքի էությունը բացահայտելու գործում, այնուամենայնիվ, դա չի նշանակում, թե նրա կողմից հաղթահարվեց բարիքի արժեքի չափողականության խնդիրը:

Արժեքի բնույթի բացահայտման գործում շրջադարձային դերակատարություն ունեցավ սահմանային օգտակարության տեսությունը: Ըստ այդ տեսության՝ արժեքի հիմքում արդյունքի օգտակարության մակարդակն է, որը պայմանավորված է դրա նկատմամբ պահանջմունքի բավարարման կամ հագեցվածության աստիճանով: Հետագայում Ա. Մարշալը, օգտագործելով սահմանային գնահատումների սկզբունքը, արժեքի ձևավորման հիմքը համարեց սահմանային օգտակարությունը, որը պայմանավորում է պահանջարկը, սահմանային արտադրողականությունը, դա էլ պայմանավորում է

<sup>1</sup> Ավելի մանրամասն տես Վ. Աղաջանյան, Ռացիոնալի և իռացիոնալի սահմանները տնտեսական հարաբերություններում, «Բանբեր ՀՊՏՀ», 2006 (2), էջ 12-28: Վ. Աղաջանյան, Տնտեսական համակարգը՝ որպես ռացիոնալի և իռացիոնալի համադրություն, «Բանբեր ՀՊՏՀ», 2006 (3), էջ 3-20: Վ. Աղաջանյան, Ֆինանսական անկայունության հարցի շուրջ, «Բանբեր ՀՊՏՀ», 2012 (2), էջ 9-17:

առաջարկը: Այնուհետև ներկայացվեցին այն գործոնները, որոնք ազդում են առաջարկի կամ պահանջարկի, հետևապես՝ բարիքի գնի վրա:

Բարիքի արժեքի չափողականության առումով առաջանում են մի շարք խնդիրներ: Դրանք են.

1. *Չափման միավորի ընտրությունը*: Այդ հարցն առաջին անգամ առաջ է քաշել Ջ. Քեյնսը: Նա գրում է. «Երեք դժվարություն ավելի է խանգարել ինձ, և ես չեմ կարողացել հստակ ձևակերպել իմ մտքերը... Առաջին՝ չափման միավորի ընտրությունը, որն ամբողջությամբ կիրառելի է տնտեսական համակարգի հետազոտության ժամանակ...»<sup>2</sup>: Եթե հստակ չէ չափման միավորը, ապա ինչպե՞ս գնահատել տնտեսական պարամետրերի քանակական և հատկապես որակական մեծությունը: Մաթեմատիկայում կամ ֆիզիկայում չափման միավորները հստակ են, բայց երբ գործ ունենք հասարակական երևույթների փոխհարաբերությունների հետ, բախվում ենք բազմաթիվ հակասությունների: Քեյնսի մոտեցումն այս խնդրի լուծմանն ավելի խորքային է և նորովի մեկնաբանման կարիք ունի: Նրա կարծիքով՝ տնտեսական պարամետրերի միջև փոխհարաբերությունները միջնորդավորված են և այնքան բազմաշերտ, որ դրանց չափելիությունը բավական բարդ է: Նա, մասնավորապես, գրում է. «Հասարակության կողմից ստեղծվող ապրանքների և ծառայությունների ամբողջությունը տարասեռ համալիր է, որը, խիստ ասած, *չի կարող լինել չափելի* (ընդգծումը մերն է – Հ. Ա.)»<sup>3</sup>: Եթե հայտնի չէ չափման միավորը, ապա տնտեսական երևույթների փոխհարաբերության քանակական ու որակական գնահատականը հնարավոր չէ հստակ ներկայացնել: Պատահական չէ, որ Քեյնսը տնտեսական երևույթների միջև առկա գործառույթային կախվածությունները ներկայացնում է ոչ բացահայտ ձևով: Նա, արժեքային ազդակների չափակցման դրամական գործիքին զուգընթաց, օգտագործում է նաև միավոր աշխատավարձը՝ դրանով իսկ փորձելով չեզոքացնել հնարավոր անձշտությունները:

2. *Սահմանային գնահատումների հակասականությունը*: Ինչպես սահմանային, այնպես էլ մարքայան միջինացված մեծությունները վերացական են: Պատճառը նույնն է. գոյություն չունի միասնական արժեքափ: Ինչպես հայտնի է, օրդինալիստների մոտեցմամբ՝ օգտակարությունը չափելի չէ: Այդ խնդրի լուծման այլ սկզբունքներ առաջարկվեցին, սակայն հիմնավոր ուսմունք բարիքի արժեքի որոշման առումով այդպես էլ չձևավորվեց: Խնդիրն ավելի է բարդանում, երբ փորձում ենք սահմանային գնահատման սկզբունքը կիրառել հոգևոր բարիքների օգտակարությունը որոշելիս:

3. *Փողի՝ որպես միասնական չափման միավորի հակասականությունը*: Արժեքի և դրա հետ կապված փողի տեսությունը կարելի է համարել տնտեսագիտության «աքիլլեսյան գարշապարը»: Փողի ծագումը, որի հիմքում էր միասնական արժեքափի ձևավորման անհրաժեշտությունը, միտված էր ապահովելու համապատասխան տնտեսական արդյունավետություն: Այն իրեն հատուկ գործառույթներով նպաստեց գործարքային ծախսերի կրճատմանը, տնտեսական գործընթացներին բնորոշ բազմաթիվ հակասությունների հաղթահարմանը, տնտեսավարող սուբյեկտների միջև կայուն փոխհարաբերությունների ձևավորմանը և այլն: Փողը, դառնալով տարբեր արդյունքների համադրման ու չափման ստուգանմուշ, հանգեցրեց իրացվելիության ամենա-

<sup>2</sup> Keynes J., The General Theory of Employment, Interest and Money, Harcourt Brace, London, 1994, p. 37:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 38:

բարձր մակարդակի, որի հիմքի վրա նախ Մենգերը ներկայացրեց իր հիմնական դրույթները, իսկ հետագայում Ջ. Քեյնսն առաջ քաշեց իրացվելիության (գործարքային, նախազգուշական, սպեկուլյատիվ) մոտիվների հայեցակարգը:

Անհրաժեշտ է նշել փողի՝ որպես միասնական արժեչափի ներքին հակասականությունը: Արժեքի հիմնախնդրի առումով բավական բարդ է յուրաքանչյուր գործոնի ազդեցության չափի գնահատումը, ինչը հիմնականում կատարվում է սահմանային գնահատումների սկզբունքի կիրառմամբ: Բայց, ինչպես վերը նշեցինք, այդ սկզբունքը ևս վերացական է, և գոյություն չունի որևէ մոդել, որի միջոցով հնարավոր լինի արտացոլել տնտեսական հարաբերությունների իրական փոխազդեցությունները և արդյունքները: Խնդիրն ավելի է բարդանում, երբ փորձում ենք տարբեր արդյունքների արժեքային համամասնությունները ներկայացնել փողի՝ որպես միասնական չափման ստուգանմուշի միջոցով: Այն, որպես այդպիսին, կատարյալ չէ, հետևապես՝ դրա միջոցով տարբեր բնույթի և նշանակության արդյունքների արժեքների համադրումը թերի է: Սա նշանակում է՝ խաթարվում է *փողի արժեքի չափման միջոցի* գործառույթը:

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ փողի՝ որպես միասնական արժեչափի միջոցով ճշգրտորեն չեն արտահայտվում բարիքների արժեքային համամասնությունները, և դրա գործառույթների խեղաթյուրումը կարող է դառնալ տնտեսական տատանումների պատճառ:

### **Տնտեսական աճի որակի չափողականությունը**

Հայտնի է, որ ՀՆԱ մակարդակը չի կարող արտահայտել տնտեսական համակարգի իրական վիճակը, որովհետև դա, ըստ էության, քանակական ցուցանիշ է: Դրա միջոցով հնարավոր չէ ստույգ պատկերացում կազմել ընդհանուր բարեկեցության մասին: Ընդհանրապես, քանակական ցուցանիշները շատ խոցելի են, որովհետև դրանք գրեթե տեղեկատվություն չեն պարունակում երևույթի բովանդակության մասին: Նույնը վերաբերում է նաև տնտեսական աճի գնահատմանը: Այս առումով, կարևոր է պարզել *տնտեսական աճի որակը*, որը հնարավորություն կտա իրական պատկերացում կազմելու այս կամ այն երկրի ընդհանուր իրավիճակի մասին: Ուստի անհրաժեշտ է ընդգրկել ցուցանիշների այն համակարգը, որի միջոցով տնտեսական աճի որակը կարտացոլվի բազմակողմանիորեն:

Այսպես՝ նախևառաջ անհրաժեշտ է սահմանել տնտեսական աճի որակը: *Տնտեսական աճի որակը բարիքների արտադրության այն մակարդակն է, որ ապահովում է հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների ներդաշնակ զարգացումը՝ հիմքում ունենալով հոգևոր-մշակութային արժեհամակարգ:* Բնականաբար, անհրաժեշտ է հստակ ներկայացնել *բարիք* հասկացությունը: Տնտեսագիտական գրականության մեջ բարիքը սահմանվում է որպես մարդու պահանջմունքների բավարարման միջոց: Սակայն, կարծում ենք, համակողմանիորեն չի արտահայտվում դրա բովանդակությունը: Մարդու կենսագործունեությունը բազմաբնույթ է, որը դրսևորվում է տարբեր ուղղություններով: Վերջնական նպատակը բարիքների անհրաժեշտ մակարդակի ապահովումն է: *Բարիքը* ընդգրկում հասկացություն է՝ նյութական, հոգևոր-մշակութային, սոցիալական, առողջապահական, բնապահպանական, քաղաքական բովանդակությամբ: Օրինակ՝ քաղաքական ազատություն-

նը, ազատ ժամանակը, կենսոլորտի մաքրությունը, մարդկանց առողջությունը, կրթական մակարդակը, համակեցության նորմերը բարիքի կարևոր տեսակներ են: Այդ բոլոր բաղադրամասերի անհրաժեշտ մակարդակի առկայությունն ապահովում է համապատասխան *բարեկեցիկ կյանք*: Այս առումով, տնտեսական աճի որակը գնահատելիս, պետք է հաշվի առնել բարիքների բոլոր տեսակների բավարարման մակարդակը: Հետևապես՝ առաջարկվում է ցուցանիշների համակարգ, որը բնութագրում է տնտեսական աճի որակը: Այդ ցուցանիշներն են.

*Առաջին՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերման մակարդակը*: Տեղեկատվական տեխնոլոգիան օբյեկտի, երևույթի մասին տվյալների հավաքագրման, մշակման, փոխանցման միջոցների և մեթոդների ամբողջական գործընթաց է: Դրա նպատակը անհրաժեշտ տեղեկույթի ձեռքբերումն է՝ այս կամ այն ոլորտի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով: Փաստորեն, տեղեկատվական տեխնոլոգիաների կարևոր խնդիրներից է տեղեկույթի անհամաչափության հաղթահարումը: Ռեսուրսների արդյունավետ բաշխվածությամբ տնտեսական արդյունավետության բարձրացումը էականորեն պայմանավորված է տեղեկույթի անհամաչափության հաղթահարմամբ: Դա հնարավորություն է տալիս մեծ չափով կրճատելու գործարքային ծախսերը և ապահովելու արդյունավետության ավելի բարձր մակարդակ: Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերման մակարդակի գնահատման համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ ցուցանիշների համակարգը. տեղեկատվական տեխնոլոգիական արտադրանքի և ՀՆԱ հարաբերակցությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների հավելաճի տեմպը, տեղեկատվական տեխնոլոգիաների մասնաբաժինն արտահանման մեջ:

*Երկրորդ՝ գիտակրթական գործունեության մակարդակը*: Բոլոր ժամանակներում զարգացումը պայմանավորված է կրթությամբ և դրա հիմքի վրա ձևավորված գիտական մտքով: Որակական աճ են ապահովում այն երկրները, որոնք մեծ ուշադրություն են հատկացնում կրթությանն ու գիտությանը: «Գիտությունն ուժ է» թևավոր խոսքը ոչ միայն չի կորցրել իր այժմեականությունը, այլև ձեռք է բերել նոր իմաստ: Կրթության և գիտության դերը չի կարող սահմանափակվել արտադրության մեջ դրանց արդյունքների ներդրմամբ՝ որպես տնտեսական աճի որակի ապահովման կարևոր բաղադրուցիչ: Դրանք հասարակության հոգևոր-մշակութային հիմնարար բնագավառներ են, որ ապահովում են ռազմավարական զարգացման հեռանկարը՝ դառնալով բարձրտեխնոլոգիական տնտեսության ձևավորման հիմքը: Ո՞րն է պատճառը, որ գիտատեխնիկական ավանդույթների կողմերը և տնօրինողները մի քանի արևմտյան երկրներ են, որոնք, հիմնվելով մարդկության կրթական և գիտական հազարամյա նվաճումների վրա, կարողացել են ստեղծել համապատասխան հետազոտությունների անհրաժեշտ միջավայր ու մշակույթ, մրցունակ դառնալ հասարակական գործունեության բոլոր ոլորտներում: Գիտակրթական մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ ցուցանիշների համակարգը. գիտակրթական ծախսերի և ՀՆԱ հարաբերակցությունը, գիտակրթական ծախսերի հավելաճի տեմպը, գիտական ծախսերի մեջ պետական հատվածի տեսակարար կշիռը, տնտեսապես ակտիվ բնակչության մեջ բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռը:



**Երրորդ՝ տնտեսական անվտանգության մակարդակը:** Տնտեսական անվտանգության իրավիճակը գնահատվում է մի շարք ցուցանիշներով: Տնտեսական աճի որակը պետք է զուգակցվի տնտեսական անվտանգության անհրաժեշտ մակարդակի ապահովմամբ: Այս առումով, տնտեսական աճի որակն ավելի ընդգրկում է հասկացություն է, որը պայմանավորված է սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային բազմաթիվ երևույթներով: Տնտեսական աճի որակի ներքո չպետք է հասկանալ միայն բարիքների որակական ցուցանիշների բարելավում: Դա կապված է հասարակական կեցության բոլոր ոլորտների ներդաշնակ զարգացման հետ, որտեղ, աստիճանաբար, առաջնային նշանակություն է ձեռք բերում մարդու հոգևոր-մշակութային և սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Տնտեսական անվտանգության իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ է կիրառել ցուցանիշների հետևյալ համակարգը. մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն յոթնյակի երկրների նույն ցուցանիշի համեմատությամբ, ներդրումների մակարդակը ՀՆԱ-ի նկատմամբ, բնակչության այն հատվածի տեսակարար կշիռը, որ ունի կենսանվազագույնից ցածր եկամուտներ, ներքին և արտաքին պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ:

**Չորրորդ՝ բնապահպանության մակարդակը:** Տնտեսական աճը պետք է ուղեկցվի բնապահպանական հավասարակշռության անհրաժեշտ մակարդակի ապահովմամբ: Եթե տնտեսական աճն ուղեկցվում է բնության չարաչափմամբ, մթնոլորտի և ջրային ավազանի աղտոտմամբ, անտառների վերացմամբ, հողի էրոզիայով և այլն, որոնք ամբողջությամբ խաթարում են մարդու գոյատևմանն անհրաժեշտ կենսապայմանները, ապա մենք գործ ունենք ոչ թե տնտեսական առաջընթացի, այլ հետընթացի հետ: Բնապահպանության մակարդակը գնահատելու համար նպատակահարմար է կիրառել Յեյլի համալսարանի կողմից հաշվարկված ցուցիչը:

**Հինգերորդ՝ առողջապահության մակարդակը:** Եթե տնտեսական աճն ուղեկցվում է բազմաթիվ հիվանդությունների ավելացմամբ, այսինքն՝ առկա է հասարակության անդամների առողջական վիճակի վատթարացում, և դրա հաղթահարման միջոցառումները բավարար մակարդակի վրա չեն գտնվում, ապա, բնականաբար, տնտեսական աճի որակը ևս անհրաժեշտ մակարդակի վրա չէ: Առողջապահության մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ ցուցանիշների համակարգը. առողջապահական ծախսերի և ՀՆԱ հարաբերակցությունը, մեկ բժշկին բաժին ընկնող բնակիչների թիվը, 1000 բնակչին բաժին ընկնող հիվանդանոցային մահճակալների թիվը, նորածինների մահացության մակարդակը, կյանքի սպասվող տևողությունը:

**Վեցերորդ՝ մշակույթը և ազատ ժամանակը:** Մշակույթը հոգևոր գործունեության ոլորտ է, որի դրսևորման ձևերից է գրականության, թատրոնի, կինոյի, երաժշտության, գեղանկարչության, քանդակագործության, արվեստի այլ ուղղությունների նկատմամբ պահանջմունքների բավարարումը: Հետևաբար՝ պահանջմունքի բավարարման այդ ոլորտը կապված է ազատ ժամանակի հետ: Այդ առումով, ազատ ժամանակը հասարակական բարիք է, որը բնութագրում է տվյալ երկրի զարգացման աստիճանը: Կ. Մարքսի խոսքով՝ «Ազատ ժամանակը տվյալ հասարակության հարստության չափանիշն է»: Ազատ ժամանակը գնահատելու համար հարկ է կիրառել հետևյալ ցուցանիշների համակարգը. մեկ քառ.կմ-ի հաշվով տեսարժան վայրերի քանա-

կը, հանգստի և մշակութային միջոցառումների անցկացման նպատակով կատարված ծախսերի տեսակարար կշիռը ծառայությունների ընդհանուր ծավալում, զբոսաշրջային ծառայությունների և ՀՆԱ հարաբերակցությունը:

**Յոթերորդ` նյութական բարեկեցության ապահովման մակարդակը:** Նյութական բարեկեցության հիմնական ցուցանիշներն են` մեկ շնչի հաշվով ՀՆԱ մակարդակը, միջին աշխատավարձի մակարդակը, դրամական միավորի գնողունակությունը, բնակտարածքի մակերեսը, ավտոմեքենաների թիվը և այլն: Նյութական բարեկեցության ապահովման մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ ցուցանիշների համակարգը. մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն (PPP), միջին աշխատավարձի մակարդակի և սպառողական զամբյուղի արժեքի հարաբերակցությունը, մեկ շնչի հաշվով բնակտարածքի մակերեսը, մեկ շնչի հաշվով ավտոմեքենաների թիվը:

**Ութերորդ` պարենային անվտանգության ապահովման մակարդակը:** Գյուղատնտեսական մթերքների արտադրության արտադրողականության բարձրացման նպատակով անընդհատ ավելացվում է քիմիական պարարտանյութերի օգտագործման քանակությունը: Էկոլոգիապես մաքուր սննդամթերքի տեսակարար կշիռը նվազում է: Սա նշանակում է` գյուղատնտեսական մթերքի քանակական աճը զուգակցվում է դրա որակի անկմամբ, ինչը կարող է բազմաթիվ անցանկալի հետևանքներ ունենալ մարդկանց առողջության առումով: Պարենային անվտանգության մակարդակը գնահատելու համար պետք է կիրառել հետևյալ ցուցանիշների համակարգը. բավարար քանակությամբ անվտանգ և սննդարար մթերքի ֆիզիկական մատչելիությունը, սոցիալական բոլոր խմբերի համար անհրաժեշտ քանակի և որակի սննդամթերքի տնտեսական մատչելիությունը, պարենային անկախությունը:

**Իններորդ` քաղաքական ազատության և կայունության մակարդակը:** Ինչպես արդեն նշել ենք, *բարիքը* ընդգրկում հասկացություն է, որը ներառում է նաև մարդու քաղաքական ազատությունը: Դա մարդու կենսական պահանջներին քաղաքական ազատության հայացքների, տեսակետների արտահայտման, ընտրություն կատարելու ազատության, ժողովրդավարական սկզբունքների կիրառման միջոցով: Տնտեսական աճը և քաղաքական կայունությունը փոխկապված են: Քաղաքական կայունությունը և անվտանգությունը բարիք են, որոնք ապահովում են տնտեսական կայուն աճ: Բացի դրանից, քաղաքական կայունությունը ձևավորում է համապատասխան բարոյահոգեբանական մթնոլորտ` որպես բարեկեցիկ կենսակերպի կարևորագույն բաղադրատարր: Քաղաքական ազատության մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել ազատության պալատի և քաղաքական կայունության ու անվտանգության ինդեքսները:

**Տասներորդ` ինստիտուտների կայացման մակարդակը:** Ինստիտուտների կայացումն ապահովում է մարդու անօտարելի իրավունքների պաշտպանություն, օրենքի գերակայություն, հասարակական բարիքների արտադրություն և այլն, որոնք հասարակության բնականոն կենսագործունեության հիմքն են: Ինստիտուտների կայացումն ու գործունեությունը նույնպես բարիք են և տնտեսական աճի որակի գնահատման կարևոր բաղադրիչ: Դրա մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել ինստիտուցիոնալ կատարողականի ցուցիչը (Համաշխարհային տնտեսական ֆորում), ձեռներեցության կատարողականի ցուցիչը:

*Տասնմեկերորդ` աշխատանքի պայմանները և անվտանգության ապահովման մակարդակը:* Աշխատանքն ինքնին հոգևոր բովանդակություն ունի, որի միջոցով մարդը ոչ միայն ստեղծում է բարիքներ իր կենսագործունեությունն ապահովելու համար, այլև բավարարում է ստեղծագործելու պահանջմունքը: Տնտեսական աճի հիմնական գործոնը հենց աշխատանքն է, սակայն կարևոր է պարզել, թե ինչպիսին են դրա պայմանները. հատկապես կարևորվում է անվտանգության պարամետրը: Եթե տնտեսական աճն ապահովվում է աշխատանքի ծանր պայմաններով, որը, բնականաբար, դրսևորվում է նաև ոչ համարժեք փոխհատուցմամբ, ապա նման տնտեսական աճը, որակի առումով, ճիշտ չի արտացոլում տնտեսական համակարգի իրական վիճակը: Աշխատանք պայմանների և անվտանգության մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ ցուցանիշները. զբաղվածության մեջ ռիսկային և վնասակար հատվածի տեսակարար կշիռը, արտակարգ իրավիճակների հաճախականության հետ կապված հարաբերական ցուցանիշը:

*Տասներկուերորդ` գործազրկության և աղքատության կրճատման մակարդակը:* Աշխատանքը մարդու պահանջմունքների կարևոր տարրն է: Մարդն ունի ստեղծագործելու պահանջմունք, որ բավարարում է աշխատանքային գործունեության միջոցով: Աշխատանքը մարդու եկամտի կարևոր աղբյուրն է: Գործազրկության դեպքում նա զրկվում է եկամտի հիմնական աղբյուրից և սոցիալական պահանջմունքը բավարարելու հնարավորությունից: Ուստի պետք է զուգակցել տնտեսական աճի որակը և գործազրկության մակարդակը: Նույն տրամաբանությամբ` տնտեսական աճի որակը գնահատելիս պետք է հաշվի առնել աղքատության մակարդակը: Գործազրկության և աղքատության մակարդակը գնահատելու համար հարկ է կիրառել տեսության մեջ հայտնի ցուցանիշները:

*Տասներեքերորդ` ֆիզիկական ենթակառուցվածքների ապահովման մակարդակը:* Այդպիսի ենթակառուցվածքներից է ճանապարհային շինարարությունը, որի անհրաժեշտ մակարդակը մի կողմից` ապահովում է տնտեսական արդյունավետություն, մյուս կողմից` հարմարավետ պայմաններ բնակիչների տեղաշարժի համար: Կարևոր ենթակառուցվածքներից են հաղորդակցության միջոցները` հեռախոսակապը, համացանցը: Դրանք նույնպես ապահովում են տնտեսական արդյունավետություն և, միաժամանակ, բարեկեցիկ կյանք: Ֆիզիկական ենթակառուցվածքների ապահովման մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել հարաբերական ցուցանիշներ` կապված. 1. երկաթգծերի, ճանապարհների առկայության և դրանց որակի հետ, 2. կապի, համացանցի տարածվածության, որակի և գնի հետ, 3. օդանավակայանների, մեքենաների, բջջային հեռախոսների հագեցվածության հետ:

*Տասնչորսերորդ` կյանքի բավարարվածության կամ երջանկության ապահովման մակարդակը:* Կյանքի բավարարվածության հիմնական չափանիշը *երջանկության* ընկալումն է, որը կարող է տարբեր լինել: Մի շարք սոցիոլոգիական հետազոտություններով փորձ է արվում հիմնավորելու, որ ժամանակակից չափանիշներով զարգացած համարվող երկրներում մարդիկ իրենց այնքան երջանիկ չեն զգում, որքան համեմատաբար թույլ զարգացածներում: Գոյություն ունի նաև հակառակ տեսակետը, համաձայն որի` առկա է որոշակի կապ կյանքից բավարարվածության և մեկ շնչի հաշվով ՀՆԱ մակարդակի միջև: Նույնիսկ ստեղծվել է ցուցանիշների որոշակի համակարգ,

որի միջոցով գնահատվում է երջանկությունը: Դա կատարվում է սուբյեկտիվ (հարցումներ) և օբյեկտիվ (բժշկական և տնտեսական պարամետրեր) եղանակներով<sup>4</sup>: Այսպես օրինակ՝ ըստ հետազոտությունների, իրենց երջանիկ համարող մարդիկ ավելի հեշտ են հաղթահարում բազմաթիվ հիվանդություններ<sup>5</sup>: Բժշկական ցուցիչներն ունեն տնտեսական բովանդակություն այն առումով, որ կապված են աշխատանքի լարվածության և սթրեսի հետ: Սա նշանակում է՝ առկա է արժեհամակարգի վերագնահատման անհրաժեշտություն: Այդ առումով, տեղեկատվական հասարակարգի տեսաբանները հետաքրքիր միտումներ են բացահայտում քաղաքակրթական գործընթացներում: Վերջին հաշվով, հասարակության կենսագործունեության գնահատման չափանիշներից է այն հանգամանքը, թե մարդիկ իրենց երջանիկ համարո՞ւմ են, թե՞ ոչ: Կյանքի բավարարվածության կամ երջանկության ապահովման մակարդակը կարելի է գնահատել հետևյալ եղանակներով. սոցիոլոգիական հարցումների միջոցով (սուբյեկտիվ) և առողջապահական ու տնտեսական պարամետրերի համադրման միջոցով (օբյեկտիվ):

**Տասնհինգերորդ՝ արժեհամակարգի ապահովման մակարդակը:** Տնտեսական աճի որակի հիմքը տվյալ ազգի կամ հավաքականության արժեհամակարգն է: Տնտեսական համակարգը հոգևոր-մշակութայինի ածանցյալն է: Վերջինս է որոշում տեխնոլոգիական զարգացման մակարդակը, տնտեսության կազմակերպման արդյունավետությունը, մրցունակության աստիճանը և այլն: Տնտեսական համակարգի բնույթը պայմանավորված է քաղաքակրթական գործընթացներով՝ հակասություններով լի պատմական զարգացման ամբողջ շղթայով: Ժամանակակից մրցակցությունը քաղաքակրթությունների մրցակցություն է: Տնտեսական աճի որակը բխում է քաղաքակրթական գործընթացների տրամաբանությունից: Դրա գնահատման վերոնշյալ բաղադրիչների մակարդակը պայմանավորված է քաղաքակրթական գործընթացներով: Արժեքային համակարգի մակարդակը կարելի է որոշել՝ գնահատելով հոգևոր-մշակութային արժեքների նկատմամբ վերաբերմունքը, իրավագիտակցության, կոռուպցիայի, հանդուրժողականության մակարդակը:

<sup>4</sup> Տե՛ս **Антипина О.**, Экономическая теория счастья как направление научных исследований, „Вопросы экономики“, 2013, N 3, էջ 95-107:

<sup>5</sup> Նույն տեղում:

**ОВСЕП АГАДЖАНЫН**

*Заведующий кафедрой “Экономической теории” АГЭУ,  
доктор экономических наук, профессор*

***К вопросу о качестве экономического роста.***- В статье рассмотрена проблема измеримости экономического роста. В связи с этим необходимо определить, что такое качество экономического роста. Качество экономического роста это тот уровень производства благ, который обеспечивает гармоническое развитие всех сфер жизнедеятельности общества, основой которой является система духовно-культурных ценностей. Представлена система показателей, посредством которой можно оценить качество экономического роста. В систему этих показателей входит уровень приобретения информационных технологий, научной и образовательной деятельности, защиты окружающей среды, здравоохранения, продовольственной безопасности, формирования институтов, условий и безопасности труда, физических инфраструктур, восприятия счастья и системы ценностей.

**HOVSEP AGHADJANYAN**

*Head of the Chair of „Theory of Economics” at ASUE,  
Doctor in Economics, Professor*

***On the Issue of Economic Growth.***- In this article problem of measuring in economics is presented. In this context it is essential to clarify the measurement of the economic growth. From this viewpoint it is necessary to define the quality of the economic growth: the quality of economic growth is the level of the production of wealth that provides the harmonious development of social vitality in all spheres, the basis of which is the spiritual and cultural system of values.

The system of indexes through which it is possible to evaluate the quality of the economic growth is discussed. Those indexes are: the level of IT acquirement, educational and scientific activity, protection of the environment, health care, food security, political freedom, institutional establishment, job conditions and safety, unemployment and poverty, physical substructures, perception of happiness, the system of values.

